



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13135

891.99

S-25

2003

436

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

Ի Ե. ԱՐԱՐՈ Ձ. ՊԱՏԿԻՐ

ԵՒ

Ի ՄԻ ՎԵՐՋԱԲԱՆ

Ի Տ. ՄԱՆԱՎԵԱՆԷ



891.99
Մ-25

Կ. ՊՕՂԻՍ

ՅԳՈՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆՑՑ

1876

891.99

6-25

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

ԿԱՐ

7րդ դարի ՀԱՐԱԿԱՆՈՐ ԽՈՐԱԳԷՏԸ

Ս. Խ. Լ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ
 Р. А. ПУБЛИЧНАЯ Библиотека
 1922
 * Գրգռաբար Ա. Մասնիկյան
 ՄՅՁԱՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ Տ. ՄԱՆԱՎԵԱՆԻ



Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԵՍՏԱՆԵԱՅՑ

1876

2982

ՀԵՂԻՆԱԿԻՆ

ՈՒՂՆԻՑ

Ա. Ա. ԲԱՐՆԵՐՆԵ

Մրտենագարդ ջիշխեմ սրանայ յասպարեզ,
 Արինական կամ ձիբէնետօր 'ի հանդես,
 Բագարդ պասկ 'ի շուք գրչխոյդ խաղաղիկ,
 Ո՞ւ, նուիրել, իմա Մեկեհնա անկեղծիկ.
 Իւծեալ քնարիս քե մագական էր բան ու շունջ,
 Գրչառական գսիրոյդ ոգեյ 'ի մրմունջ'
 էր ոջինջ, այլ եւ ոլոր քեզ Պիմպէան,
 Ֆրքէ՛ր իմ մեծ, ընդ նըմին էր իսկ արծան :
 Բախ եւ գուարք ա՛յ ընդ ընդիցրս ողջոյն
 Է՛ն, ընծայեմ գխայրիս՝ ձեռօք դողդոջուն,
 Նա աւանիկ գիմ դոյզըն էրկ գԳայլ վաճան,
 Կուրթեմպերկեան վայելելով քեւ 'ի լոյս .
 Երէ իցէ սըրտիդ 'ի ճան գեղայոյս,
 Արճանս ամէր սիրոյդ՝ որ ինձ քելաղիր,
 Նա 'ի վարձ ինձ, իսկ անուան քում արգաղիբ:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Օսմանիէ թաւրոնի վերառեսուչ եւ դերասանապետ՝ Մեծ . Թ . Էֆէնտի Տաուուբաճեան՝ 1875 Յունվար 22 (չորեքշաբթի գիշեր) ՚ի նպատտ իւր ներկայացոյց սոյն մեր աշխատութիւնն, որ հանդիսատես ազգայիններէն մեծ բնդունելութիւն գտաւ իւր թերութիւններով հանդերձ . եւ այն սրջոյնն Մանդուսէի, Մասիտի եւ թաւրոնի Մեծ . Թաւազիրները՝ չափազանց գովեստներ չուղեցին, որոց արդարը խօսելով արժանի չէր մեր հեղինակութիւնը : Այս բարոյական խրատոյցներն յորդոր մ'էին սոյն գոյզն եւ աննշան աշխատութիւնն տապաքութեամբ ՚ի լոյս բնծայել, որուն ազգայիններէն շատերն ալ փափաքանօք կ'սպասէին . ըսյց զպրոցական զբաղմունքնիս ու ելմտական անձուկ վիճակնիս չէին ներեր :

Այս անգամ Նէնի-Չարուի Ազնիւ ազգայիններէն Մեծաշուք Մարուգէ Էֆէնտի Տրէնկեանն նկատելով որ ձախորդ պարագաներու բերմամբ նիւթական տաղնապալից վիճակի մ'ենթարկեալ կը գտնուինք, յիշելու միանգամայն Նէնի-Չարուի կրկեսն վարժարանաց մէջ խղճի մտօք եւ հաստարիտ անձնութիւնամբ վարած մեր քառասնայ պաշտօնն եւ աշխատութիւնը, Գայլ Վահանայ հազար օրինակի տապաքական ամեն ծարսն ինքնայորդոր իւր քսակէն շորոնեց մեզ իւր ազգասիրական գործոց վրայ նոր թիւ մ'այ աւելցնելով :

Ուստի մեր ջերմագին շնորհակալութիւնը յարմարելով յիշեալ մեծահոգի բարերարին, որուն սոցն շնորհին արժանացանք այս տեսակ նիւթական նեղ ժամանակի մը մէջ, մեր Գայլ Վահանն անոր անուամբն նուիրագործելով իբրև փունջ մի կը նետենք Հայկական Թատերաբեմին վրայ, ընթերցող ազգայիններէն մեր մարդկօրէն վրիպակաց ներողութիւնն սպասելով: Եւ հաւաստի ենք որ Մարուգէ Էֆէնտիի այս առաքինական օրինակէն շատ ազգայիններ ալ շարժելով աւելի փառաւոր հեղինակութեանց ձեռնարկելու քաջալերութիւնը կուտան, որ աւմեն տեսակ յառաջադիմութեան միակ կենսատու սարքըն է:



Ա Ն Ձ Ի Ն Ք

Վ.Ա.Հ.Ս.Ն	Իշխան Տարօնոյ
Մուշեղ	Մարգարան Հայաստանի
Ներսէս	Իշխան Ապահունեաց
Սմբատ	Հայ գերի Պարսկաստանի մէջ
Սաքեհիկ	նոյնպէս
Շաւարշ	Հաւատարիմ Մուշեղի
Վաղինակ	Քարտուղար Մուշեղի
Վանէ	}	
Գագրիկ		
Գարեգին	Հայ իշխանք
Արշակ	}	
Ռուբէն		
Վանրամ	
Միհրան	Պարսից հագարապետ
Գրմիզդ	Եղբայր Միհրանայ
Կիրոս	Որդի Միհրանայ
Վարդիբ	Հրամանատար Պարսից
Արբակ	Ատենադպիր Միհրանայ
Դարբն	Ա. պաշտօնակալ Միհրանայ
Նէյ	դուստր Միհրանայ
Մանթանէ	Դուստր Արբակայ
Հայգի	Մանթանէի մտերիմը
Նաժիշտք Պալատականք Հարկարարչետ Զօրք Էայլն :		

Առաջին Արարուածը Ռզկան ամուրիկն սրանք . Երկրորդ Արար-ը Միհրանայ պարտիպին մէ . Երրորդ Արար-ը Օն քաղաքի դաշտին վրայ . Կրկ . Երրորդները Միհրանայ ասպարանին մէջ . իսկ վերջումը Կար թեքան վրայ :

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐ . Ա . ՊԱՏԿԵՐ . Ա . — Խորագիտութեան առաջին փորձը — Մուշեղ իւր գաւկէն կորուստը կողբայ . — Ներքեւ մխիթարիչ կրթայ . Վահանայ մարգարան ընելու խորհուրդը . — Խորամանկ Որմիզը՝ մեռեալ Որմիզին տեղ կանցնի . — Վահանայ գալուստը . Մարգարանութեան հանդէսը . — Նշանաւոր քննութիւնը . Որմիզի խաբէութիւնը Վահանայ հարցով ի գերեւ երեսը . — Աղմուկ եւ շիտիթ արքունեաց մէջ . Որմիզի մահը Վահանի մէկ հարուածով :

ԱՐԱՐ . Բ . ՊԱՏԿԵՐ . Բ . — Երկու Հայ գեղիք Պարսկաստանի մէջ — Պարսիզպանը . գերուհեոյն շքրջագայութիւնը . — Միւրոյ յայտարարութիւն . — « Ես եւս Հայ եմ » — Միհրանի գալուստը գաղանեաց երեսան երեսը կ'արդիւնէ . — Վահան իբրեւ Պարսից բարեկամ Միհրանայ կը ներկայանայ . Վահան զՄիհրան սպաննելու զխտուիլ , խոհեմութիւն . — Վահան հրնարքով մը 5000 գօրք կառնէ Միհրանէն իբրեւ Հայաստան նուաճելու . Կիւրոսի բռնութեամբ գերուհին հրապուրելու գեղը . — Պահուրտած գերին . — Յարձակումն . — Գերիին ձերբակալուիլը , անլիւհեր պարտիզպանը :

ԱՐԱՐ . Գ . ՊԱՏԿԵՐ . Գ . Թակարդ — Վահան գինուորաց Պարսկի հազուստ կը հագցնէ . — զօրականք իջուն Վահան արթուն , վրէժինդրութեան ուխտը , յարձակում . — Պարսիկք խաբուած Հայաստան ոտք կոխած կարծելով , յաղթական աղաղակներ կը բառնան . Վահան բոլորն ալ Յունական կրակով կայրէ :

ԱՐԱՐ . Դ . ՊԱՏԿԵՐ . Դ . Նախանձու կոխ . — Պարսկուհին եւ Հայուհին — մխիթարութիւն . — Իշխանուհեոյն

միջամտութիւնն եւ գերուհին զԿիւրոս անարգելը — Վահան իբր բարեկամ Միհրանայ ներկայանալն , եւ անոր հաւատարիմները հեռացնելը . — Վահան Միհրանայ կնիքը ձեռք անցնելէն յետոյ վրան յարձակելով կսպաննէ դաշտնով . — Յայտնութիւն :

ՊԱՏԿԵՐ Ե . Մեռեալը հիւանդի տեղ — Վահան Միհրանայ դիակը իբր ողջ անկողնոյ մէջ նստեցնելու պատրաստութիւնը . Միհրանայ բոլոր գրութիւնները կողոպտելը . — Վահան Միհրանայ կողմէն կը հրաւիրէ անոր պալատականները եւ հիւանդ ըլլալը պատրուակելով իւր ուղածին պէս հրովարտակ մը հանել կուտայ . — տարակոյս . Վահան մէկ հարուածով կ'անշնչացնէ զՍրբակ իւր գաղտնիքը կռահելուն համար :

ԱՐԱՐ . Ե . ՊԱՏԿԵՐ Զ . Կրակի խնձորք — Պատրաստութիւն հացկերոյթի , հրաւիրելոց հեռոյնեւէ գալուստը . — Առաստաղէն կսկսի կրակ թափիլ . հրաւիրեալք կրակին մէջ կայրին , անիծելով գԳայլ Վահան :

ՎԵՐՋԱԲԱՆ . Վահան Միհրանայ պատիերով ծպտեալ . — Վարչիւր կը ներկայանայ . — Շաւարշայ կատակախօսութիւնը . — Վահան պէտք եղածը Վարչիւրէն իմանալէն վերջն իւր բուն գէժքը կը ցուցնէ . — Վարչիւրի զարմանքը եւ մահուան դատապարտուիլը . — Կալանաւորաց ազատութիւն շնորհուիլը . — Սրբակայ յուխտենականութիւն երթալու կառքը . — Կալանաւորները Վահանին կը ներկայանան . — Երկու գերիները հրաշքով հայրերին կը գանեն , կատարեալ երջանկութիւն . — Երկու գերեաց ամուսնութեան հաստատութիւնը . — Բարի անձինք միշտ կը յաղթանակեն :

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ



ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

(Ողկան ամուսինն սրահը)

ՏԵՍԻԼ Ա.

ՄՈՒՇԵՂ և ՆԵՐՍԷՍ

ՄՈՒՇԵՂ . Ներսէս , դուն աղէկ գիտես որ բնութիւնն
ինձ հետ խիստ վարուեցաւ . անոր տուած վիշտերն ու
տառապանքներն իմ ալեացս հետ ծերացան . միակ դըստ-
րիկ մը . ան , Սաթենիկս . . . իմ յուսահատութեանս մէջ
մխիթարիչ հրեշտակ մ'էր . . . այն ալ վերջին արիւնտա
յաղթանակիս փրկանքը եղաւ պատերազմին դաշտը . . .
Հիմայ իմ սիրտս այս իշխանական ծիրանիիս տակը մահա-
մերձ թշուառ գերի մ'է , եւ եթէ տակաւին կուրծքիս
ներքեւ կիսաշունչ կենդանութիւն մը կը խաղայ , անկ-
կայ հայրենեացս սէրն է :

ՆԵՐՍԷՍ . Բայց , տէր իշխան , կարծեմ անոր զիակը չը
գտնուեցաւ :

ՄՇ . Ոչ :

ՆԵՐ . Ուրեմն կրնայ ըլլալ որ գերի վարած ըլլան :

Հեղինակն իրեն պահած է
նրկայացման իրաւունքը :

ՄՇ . Այդ յոյսն ալ ինձ համար վերջացած է :

ՆԵՐ . Այդքան յուսահատութիւն չ'ես գիտեր՝ որ ժամանակը հրաշքներ կը գործէ :

ՄՇ . Ի՞նչ կրես , սիրելիս Ներսէս . . . ժամանակն ալ իմ բաղդիս թշնամին է . այո՛ , ժամանակն՝ անոր կենդանի ըլլալու յոյսն իմ երեւակայութեանս մէջ ալ կը հրահարէր , այդ պատճառաւ ընդհանուր Պարսկաստան աւեր հետքերը խուզարկել տուի , բայց 'ի գնւր . անգութ ճակատագիրն անոր եւ իմ մէջ տեղ անհուն յաւիտենակաւութիւն մը վճռած էր :

ՆԵՐ . (Ինքնիրեն) (Քաջասիրտն ալ կրնայ եղեր այսքան վնասիլ .) Ձեռքաւ մը կըզգամ , իշխան , որ քու հաստատուն կամքդ ու անվերջ սիրտդ բաղդին տկար արկածներուն տակ այդպէս ընկճեր են :

ՄՇ . Բաղդի արկած ըսիք . ան , չէ . . . իմ սխալմունքըս զիս ընկճեցին . . . չտվազանց հայրենասիրութիւնս՝ Պարսկաստանի ձախող քաղաքականութեան իւր սուրբ նուիրելով կարծեց թէ ազազայ Հայաստանին երանաւէտ բաղդ մը կը պատրաստէ , բայց այս վերջին տարիներս՝ Պարսից մեր դէմ բացած պատերազմը ստուգեց թէ խաբուած եմ եղեր :

ՆԵՐ . Երբ Խորովայ առաջարկութիւնն ընդունէիք եւ Յունաց վրայ արշաւելուն՝ անոր օգնէիք , կարծեմ ոչ այն պատերազմն տեղի կ'ունենար , եւ ոչ 'իբնակուան տակութիւնն՝ որ զՊարսկաստան կրկին ձեր դէմ զինած է :

ՄՇ . Շիտակ է այդ բսածդ , բայց սափազանք էի այնպէս վարուիլ :

ՆԵՐ . Ի՞նչ պատճառ ունէիք .

ՄՇ . Խորով կ'աշխատէր՝ որ մեր արեամբն իւր յաղթանակը գնէ , եւ զօրութիւնը սպառած Հայաստանն ալ ապահով մարտէ :

ՆԵՐ . Այդ տեղեկութիւնը ստոյգ աղբիւրէ քաղած էք :

ՄՇ . Կը տարակուսիք . . . Խորովայ ներքին խորհրդակիցն իմ բարեկամն է . նա ամեն բան ինձ ժամանակին յայտնեց :

ՆԵՐ . Շնտ աղէկ . մինչդեռ Հայաստանին զինուորական փրճակը գորացուցիլ չէ , եւ դուք ալ ծերացած էք , ուրեմն ո՞վ դէմ պիտի կենայ Միջրանայ յարձակման՝ որ Խորովայ հրամանով Մշոյ մէջ բանակ դրած է :

ՄՇ . Ես որոշած եմ այդ գործը Վահանին յանձնել եւ արդէն հոս անոր դալուն կսպասեմ :

ՆԵՐ . Քաջ մտածեք էք . նա դարուս խորագիտութեան մէկ կենդանի տիպարն է :

ՏԵՍԻԼ Բ .

ՆՈՅՆԲ ԵՆ ՇԱԽԱՄՇ

ՄՇ . Ի՞նչ կուղէք , Շաւարշ :

ՆԵՐ . (տեսնենք ի՞նչ պիտի ըլլայ .)

ՇՐՇ . Տէր իմ , անմասն իշխանժը ձեզ տեսնել կուզէ :

ՆԵՐ . Ո՞վ պիտի ըլլայ արդեօք :

ՄՇ . Ո՞ր է ինքը :

ՇՐՇ . Հոս սրտիդ :

ՄՇ . (առ Ներսէս) Ո՞վ կրնայ ըլլալ :

ՆԵՐ. Հարկաւ ճանաչելու ենք :
ՄՇ. Ըսէք թող ներս գայ :
ՇՐՇ. Շատ աղէկ . (կերքայ)

ՏԵՍԻՒԼ Գ.

ՄՈՒՇԵՂ ԵՆ ՆԵՐՍԵՍ

ՆԵՐ. Մի մտածէք հիմայ գործը կը յայտնուի :
ՄՇ. Կը մտածեմ թէ Միհրանայ մարդիկներէն Ըլլալու
չ'է . . . արդէն անոր վերջին պատգամաւորը նախատա-
նօք յետս գարծուցի :

ՏԵՍԻՒԼ Գ.

ՆՈՅՆԲ ԵՆ ՈՐՄԻՁԴ

ՈՐՄ. Կարծեմ կարեւոր գրադմունքներնուդ արդեւք կ'ը-
լամ :
ՄՇ. Ձեր այցելութիւնը պատիւ կը համարինք :
ՆԵՐ. (տեսնենք բան մը թղթաւ և) :
ՈՐՄ. Ձեր բնդունելութիւնը զիս աւելի չնորճապարտ կը
կայուցանէ :
ՄՇ. Բայց ներեցէք ձեզ չը կրցայ ճանչնալ :
ՈՐՄ. Կը յիշէք անշուշտ ներկայիս 16 տարի առաջ պար-
սից պատերազմը Գուշանայ զէն :
ՆԵՐ. (ծանօք Ըլլալու և) :

ՄՇ. Այո, ես ալ իմ բանակովս պարսից օգնեցի :
ՈՐՄ. Կը յիշէք նաեւս պատերազմի զաշտին վրանն , ու-
րուն մէջ 6 ամիս շարունակ ընակեցաք Մատեան գնդին
գորսպետին հետ :
ՄՇ. (ախճատեսի մը պէս կը խօսի) Բայց այդ պատ-
մութիւնը ուսկից լսած էք :
ՆԵՐ. (նոս հանելուկ մը կայ . տեսնենք) :
ՈՐՄ. (կը լուսամ որ պիտի յաջողինք) Կը յիշէս լու-
պարապետին անունը :
ՄՇ. Սյո , Որմիզդ , իմ բարեկամս էր անիկայ . . . Բայց
աւանդ հիմայ մտած է :
ՈՐՄ. Խաբած են քեզ , նոյնինքն է՝ որ կը խօսի քեզ
հետ , Մուշեղ :
ՄՇ. Ուրեմն վերջին անգամ զքեզ ողջագուրեմ , բա-
րեկամ : (կը գրկուին)
ՈՐՄ. (գործը կը դիւրանայ կոր) :
ՄՇ. Բայց այսչափ ժամանակէ մեր էէք եւ ինչպէս նոս
եկաք :
ՈՐՄ. Իմ քաջութիւնս՝ որ Պարսկաստանի տիեզերակալ
անունը տուաւ կաւատայ թողանը ժամանակ՝ Միհրանայ
նորխանն իմ անձիս զէն գրգռեցին , որ խորով գահա-
գալիւրուն իմ վրայ սուտ ամբաստանութիւններ ընելով
զիս բռնուերու գատապարտել տուաւ , որ ուր ու-
րեմն յաջողեցայ վախչել , եւ անաքու գերիչը կը դի-
մեմ , սա ուխտիւ որ՝ ոչ միայն քեզի հաւատարիմ հրպա-
տակ փո գանուիմ , այլ եւ զինու գորութեա ՚բ քեզ աջակ-
ցիմ , ցորչափ Միհրան օգ չնչէ :
ՆԵՐ. (Հայաստանի համար փրկիչ մ'ալ հասաւ .)

ՄՇ. Բարեկամ, ատոնց վրայ երկար կը խորհրդակցինք, հիմայ պէտք է քիչ մը հանդստանայք . . . երկար ճանապարհորդութենէ դքեղ յոգնած կը տեսնեմ, (առ. Ներսէս) մեր կողմանէ՝ Խշիանին պէտք եղած յարգանքն ոտուր չմինչեւ որ գործս կարգի դնելով դամ:

ՆԵՐ. Շատ աղէկ:

ՈՐՄ. Բայց կ'աղաչեմ մեղի համար մի աշխատիք:

ՄՇ. Բարեկամութեան պարտքը կը կատարենք:

ՆԵՐ. Հրամայեցէք երթանք (կ'երթան)

ՏԵՄԻԼ Ե.

ՄՈՒՇԵՂ (առ.աւնձիւն)

Սյս մտալուդ վտանգին առաջն առնելու համար, աղէկ մտածեցի Վահանը . . . ես թէեւ չէի ուզեր արեւանսերկ զէնքերով ազատ ապրիլ, վասն զի զէնքը՝ տկար բռնաւորներուն օրհասական յոյսն է . . . սակայն ի՞նչ ընեմ, ահա թշնամիին հայրենեացս մէջ գործած աւերակներուն վրայ ներող աշուրներս դարձուցի, եւ որդեկիս անակնկալ կորստեան պատճառաւ սրտիս մէջ եռացող վրէժինդիր ոգին՝ վշտերուս եւ արտասուացս մէջ չափաւորեցի, բայց եւ այնպէս թշնամիիս կամքն իմ այս ազէտներուս վրայ անողոք՝ կրկին հայրենեացս վրայ սկսած է վայրենի յարձակումներ'ընել . . . ասանկ կոչը աշխարհակալներուն, մինչդեռ մարդկային խիղճն չը կըրնար ամոքել, երկաթին բերանը պէտք է պատասխանէ . . . բայց այս իրաւունքը պաշտպանելու համար, իրաւ ես

1001
1940

տկար եմ, ծեր եմ, հող չ'է. Վահան կրնայ ըլլալ Մուշեղին անսկուն բազուկը . . . (ոտքի ձայն) սիլ պիտի ըլլայ . . . հա, նա ինքն ալ եկաւ:



ՆՈՅՆ, ՎԱՀՍՆ, ՎԱՀԵՒԿ, ԳԱՐԵԳԻՆ

ՎՀՆ. Աւաթիկ եկայ, տէր իշխան:

ՄՇ. Ա՛հ, սիրեցեալդ իմ Վահան, ձեզի համար ըդդպցած սրտիս անթարմանելի գորովն ուրիշ բանով չեմ կրնալ մեկնել, միայն համբոյր մը . համբուրով մը միայն (ձակատը կը համբուրէ):

ՎՀՆ. Այդ ձեր վեհանձն բնաւորութեան ցոյցն է, իշխան:

ՄՇ. ո՛չ. ձեր արժանիքն է այն . . . բայց թողանք հիմայ այդ կէտը . . . զձեզ հոս հրաւիրելուս բռն զիւաւորութիւնը յայտնեմ:

ՎՀՆ. Պատրաստ եմ:

ՄՇ. Պարսկաստան քու սրտէդ վարդ մը վրցուց իմ սրտէս ալ, շուշան մը . . . այն, դուն քու Սեփաղ կուրտիք, ես ալ իմ Սաթնիսիկ . . . ասանկ սուղ գնեցի՞ք մեր յաղթանակն եւ մեր քաջութեան դաժնիքներն անոնց անմեղ արեամբը ներկուեցան . . .

ՎՀՆ. (Սրտիս վրէժխնդրութիւնն սկսաւ շարժիլ . . .) կ'աղաչեմ, իշխան, մի յիշերայդ սխտը պատմութիւնը. (միւս դերասանը առ.աւնձն կը խօսակցին)

ՄՇ. Չէ, այդ բանը չ'եմ ուզեր, այլ միայն հասկոյնը

կ'ուզեմ՝ թէ այդքան բիւր աղէտներուն մէջ , միշտ բազմազին խոժոռ դէմքին եւ անոր սեւ ձեռքէն թոած հարուածներուն վրայ ծաղրելով դարձեալ երջանիկ կը համարէինք անձերնիս , ինչու որ՝ հայրենի աղատութեան համար քաջ բազուկ մը ունէինք , եւ արիւնտ աւուր մը մեր մէջքը կը կրէինք , սակայն Միհրանայ սուրը մեր այս երջանկութիւնը կ'ուզէ Հայաստանի արեան մէջ խառնել , հիմայ ըսէ Վահան , դուն կրնաս անտարբեր կենալ մինչդեռ ատանկ վտանգի մատաղ քու Հարենիքդ կը գտնուի , անիծեալ ձեռքէ մը մահազուշակ դատակնիք մը ընդունելու :

Վ.Հ.Ն. Քաջը , ճշմարիտ մարդու մը սահման՝ աղատ ազբնւոն եւ աղատ մեռնելուն մէջն է , իսկ աղատութեան կեդրոն՝ Հայրենեաց ինքնիշխան ծոցը . եւ աղատ առաքինի մը կ'ըսուի այն մարդոր այս իրաւունքը պաշտպանելու համար կը մտնայ աշխարհ եւ մինչեւ գերեզմանին չեմը սուսերամերկ կը գիմէ . . . ուստի հայրենեացս վրայ կ'երգնում , թէ՛ ցորչափ կենդանութիւնն երակներուս մէջ կը խաղայ , եւ ցորչափ սուրը ձեռքիս մէջ կը թողայ , ձեզի պիտի աջակցիմ . եւ եթէ զինուոց բազը չարաչար վարուի հետս՝ կուրծքիս մահու վէրք մը տարու , կամ գերութեան շղթայ պարանոցէս կախելու , բայց եւ այնպէս ատանկ վիճակի մէջ ալ երջանիկ կ'ըլլամ , եթէ լսեմ թէ աղատ է Հայաստան . . . այն ժամանակ կը հաւատամ՝ թէ այն վէրքն՝ աղատութեան իրաւունքն է , եւ այն շղթայն՝ Հայրենեացս Աստուածը :

ՄՇՂ. (Ի՞նչ հայրենասիրական զգացում.) Վահան , կ'ուզես ինձի աջակցիլ . . . նախկին քաջութեանս յիշատակները՝ մտքիս մէջ կը ծնին , կը վազեն երակներուս մէջ՝

արեանս նոր խանդ մը եւ աշխոյժ մը շնչելու , բայց 'ի գնբ . . . ես ձերացած եմ , սաղաւարդս եւ սուրս՝ սպառեկեալ ինձ օտար են . . . : Մինչդեռ այսպիսի արկար վիճակի մը մէջ եմ ես , եւ կը տեսնամ Հայաստանին քաղաք , անխուսափելի վտանգի մ'ատաջ , իշխանական փառասիրութեան թեկն ածելու չափ չեմ վատ , որ սուրը դողդոջ ձեռացս մէջ յամառիմ , մինչդեռ ձեզի նման անզուգական արժանաւոր մը կը գտնամ :

Վ.Հ.Ն. Իշխան . . . ես ձեզ հովանաւորութեան տակ պիտի դործեմ :

ՄՇ. Կեցիր , խօսքս վերջացնեմ . . . : Հայերը վարձատրել չեն սիրեր եւ ըրած վարձատրութիւննին ալ շատ ժամանակ անարդար է , բայց ես կը սիրեմ վարձատրել եւ բարեբաղդ եմ՝ որ ձեզ կը վարձատրեմ , մանաւանդ թէ՛ ձեր արժանիքն՝ արժանաւոր վարձատրիչ մը կը գրտնայ . . . դուն իրաւունք չունիս ասոր ընդդիմութիւն ընելու . մինչդեռ քու քաջութիւններէդ պիտի կախուի հայրենեաց բազը , պէտք է որ բոլոր պատասխանատու իշխանութիւնն ալ դուք վարէք . . . ահա այս փայրկեանէս կը մերկանամ իմ իշխանութիւնս (սուրը մեզքէն կը քակե) եւ հաճոյական սիրով մը քու մէջքդ կը կապեմ : (իր ձեռքովը կ'սկսի կապել) :

Վ.Ա.Հ.Ե. (առ. Գարեգիին) Եթէ Հայերը ամեն վարձատրութիւնները այսպէս արդարութեամբ ընեն , այն ժամանակ Հայաստան օտարներէն բան կը մուրճայ . . . ըսէ , Գարեգին :

ԳՐԳՆ. Վահէ , արդէն այս դժբաղդութիւննիս արժանեաց անվարձ մնալէն յառաջ եկած է . . . :

ՄՇՂ. Ատենադպիրս կ'անչեցէք, : (Ծառայ մը կ'եր-
բայ կանգէրու.) :

Վ.ՀՆ. Տէր իշխանն, մինչդեռ արեւոր հասակդ կը դո-
ղայ, որ չըլլայ թէ անձնական հաճոյքդ կամ փառացդ
պատճառաւ Հայաստանն օտար շղթայներու տակ իջնայ,
ասոր համար նախապատիւ կը համարիք ձեր բոլոր մեծու-
թիւնը մերկանալ եւ այս իշխանական երկաթը (տարբը պա-
տենեն կը նանկ) ինձ յանձնել կը փտտահիք, ահաւասիկ այս
վայրկենէս իմ սիրտս ասոր կապած Հայրենեացս կը նը-
ուիրեմ (ծուռկի վրայ գալով) օրհնէ դիս, Հայր . . . :

ՄՇ. Օրհնեալ ըլլաս . . . (միւսներն գաղտնի կը խօ-
սակցին) :

ՏԵՍԻԼ Է.

[ՆՈՅՆՔ ԵՎ ՎԱՂԻՆԱԿ]

Վ.Ղ.ՆԿ. Ի՞նչ հրաման ունիք, Տէր իմ :

ՄՇ. Վաղինակ, իմ լիազօր փոխանորդս ու յաջորդս
կարգած եմ Վերագունը, այսուհետեւ օրինաց գործա-
դիր իշխանութիւնը ինքն պիտի վարէ, եւ Հայաստան
պէտք է տիրաւորական յարգանքն ու մեծարանքն նուիր-
ի՛ն՝ եւ իբրեւ ինձ անոր հրամաններուն հպատակի : Ուս-
տի աւերող զօրաց եւ զօրապետաց այս ուրախութիւնն
յայտնելու հրովարտակն հանէ, որպէս զի գան իրենց
խոնարհ եւ հպատակական յարգանքն նուիրեն :

Վ.Ղ.ՆԿ. Շատ աղէկ, ահա կը փութամ ձեր հրամաննե-
րն ի գործ դնելու . սն, ինչ երջանիկ լուր, Հայրենիք
փրկուեցաւ : (Կերբայ) :

ՏԵՍԻԼ Ը.

ՎԱՀԱՆ, ՄՈՒՇԵՂ, ԳԱՐԵԳԻՆ, ՎԱՀԷ՛՛

Վ.ՀՆ. Գուք զիս յանչափս պատուելով կրկին շնորհա-
պարտ կը կացուցանէք, իշխանն, գուք օրչափ անկեղծ
էք, ես ալ այնչափ հաւատարմարար պիտի ծառայեմ
ձեր նպատակը նուիրագործելու, իսկ դաւաճան թշնա-
միլն փոխանակ շողքըրթելու, ընդհակառակն նենդու-
թեամբ պիտի վարուիմ . եւ ահա ձեր առջեւ կուխտեմ
ապաղային լաւ դաս մը տալ՝ թէ իշխան մը՝ որուն քա-
ղաքականութենէն կախուած է աղղին բաղդը՝ ասանկ
անձուկ պարագաներու մէջ այսպէս պէտք է վարուիլ :

ՄՇ. Վահանն, որդեակ իմ, իմ պաշտօնս մեծ խոհե-
մութեամբ վերջացուցի . այսօր կ'զգամ՝ թէ երջանիկ եմ
. . . եւ դուք ինչպէս կուղէք այնպէս անօրինեցէք, ես
կը հեռանամ, իմ վաղեմի բարեկամներէս մէկը եկած է,
պէտք է երթամ զայն տեսնել : (Երբայու կըլլայ) :

Վ.ՀՆ. (Ռ՞վ պիտի ըլլայ) :

ՄՇ. Ես փորձառու եմ, անտանելի է ձեր պաշտօնը,
բայց անհող եղէք հիմայ ներսէսը ձեզի օգնական կը
դրկեմ : (Կերբայ) :

ՏԵՍԻԼ Թ.

[ՎԱՀԱՆ, ԳԱՐԵԳԻՆ, ՎԱՀԷ, [ՎԱՂԻՆԱԿ]]

Վ.Ղ.ՆԿ. Բոլոր զօրաց եւ զօրանոցները արդէն լուծ

զրկեցի, իսկ հրովարտակը անաւանիկ, կը հրամայէք՝ որ անգամ մը կարդամ :

Վ.Հ.Ն. Ո՛չ, հարկ չկայ :

Վ.Ղ.Ն.Կ. Ուստի . . . :

Վ.Հ.Ն. Ուզողակի իրեն տարէք՝ որ ստորագրէ :

Վ.Ղ.Ն.Կ. Շատ աղէկ : (Կերբայ) :

Ճ. ՏԵՍԻԼ Ժ.

Վ.Ա.Հ.Ա.Ն. Գ.Ս.Ր.Ե.Գ.Ի.Ն. Վ.Ա.Հ.Ե.

Գ.Ր.Գ.Ն. Տէ՛ր, ընդունեցէք մեր անկեղծ բարեմաղթու-
թիւնները :

Վ.Հ.Ն. Կ'ընդունիմ ձեր բարեմաղթութիւնները, վասն
զի գիտեմ՝ թէ նոքա սրչափ անկեղծ են, բայց մի մոռ-
նակ՝ որ այս ծանր պաշտօնը ծանր անձկութիւններ ալ
ունի, եւ որոնք թնթեցընելը ձեր աչալըջութենէն կա-
խում ունի, ուստի լաւ ուշադրութիւն ըրէք ըսածնե-
րուս :

Վ.Ա.Հ.Ե. Հրամայեցէք :

Գ.Ր.Գ.Ն. Հրամայեցէք :

Վ.Հ.Ն. Ծանր պաշտօններ ձեզ պիտի յանձնեմ, պաշ-
տօններ՝ որ զրկանքն ու ըռնութիւնը, պետական սպառ-
նալիքներն, եւ գերութեան շղթայները պիտի արհամար-
հէ եւ Հայաստանի փրկութիւնն ու ազատութիւնը նուի-
րագործելով պիտի ապացուցանէ ապագայ Հայութեան՝
թէ Վահան եւ իրեններն ճշմարիտ հայրենասէրներ էին :

Գ.Ր.Գ.Ն. Այդ պաշտօնին պարտաւորութիւնը՝ մեր սիրտն
եւ մեր խիղճը մեր վրայ կը դնեն :

Վ.Ա.Հ.Ե. Եթէ այդ պաշտօնը կենացս կորուստը սահմանէ,
դարձեալ քաղցրութեամբ կ'ընդունիմ :

Վ.Հ.Ն. Վատն եմ . . . հիմայ զձեզ տարբեր եղանակաւ,
հակառակ քաղաքականութեամբ եւ ուրիշ ճանապարհաւ
պատգամաւոր պիտի զրկեմ Միհրանին՝ որ իր բանակովը
Մուշ հասած է, երկու-քդ ալ իմ պաշտօնի՞ թարծրանալս
պիտի ծածկէք . . . Գարեգին, դուն իբր թէ՛ Մուշեղին
կողմանէ հաշտարար պատգամաւոր մը պիտի ներկայանաս
եւ ըսես իրեն՝ թէ Մուշեղ պատրաստ է հպատակիլ եւ
հարկ մ'ալ վճարել կը խոտանայ եթէ ինքն Մուշեղին
հետ զթութեամբ վարուելով, իր բանակն Մուշէն վեր-
ցընէ . . . նաեւ աշխատէ հաւատացնել թէ Վահան ա-
պտամբած է Մուշեղին դէմ եւ միայն ձեր եւ մուշեղին
մէջ տեղի ունեցած հաշտութիւնն կրնայ զայն նուաճել . . .
վերջապէս ամեն բան քու հնարագէտ խոհեմութեանդ կը
թողում :

Գ.Ր.Գ.Ն. Ապահով եղիք :

Վ.Հ.Ն. Վահէ :

Վ.Ա.Հ.Ե. Հրամայեցէք, տէ՛ր իմ :

Վ.Հ.Ն. Գու ալ ուրիշ ճանապարհաւ դարձեալ Միհրա-
նին պատգամաւոր պիտի երթաս, բայց ուզողակի իմ կող-
մանէ . . . ամեն քաղաքավարական յարգանքներ կեղ-
ծելէդ վերջը, կրօես իրեն՝ թէ Վահան Մուշեղին քու
վաղեմի թնամիտ դէմ գլուխ քաշած է, եւ քու հրա-
մանիդ կ'ըստասէ :

Վ.Ա.Հ.Ե. Շատ աղէկ :

- Վ.Հ.Ն. Ամեն խորամանկութիւն 'ի գործ զիր :
- Վ.Ա.Հ.Է. Վատահ եղիք :
- Վ.Հ.Ն. Ընդունելութեան հանդէսը կատարուելէն վերջը անմիջապէս ճանրայ ելէք . : ամենեւին զիրար ճանցած մ'ըլլաք :
- Վ.Ա.Հ.Է. Սքանչելի միջոց :
- Գ.Գ.Գ.Ն. Կեցցես , տէր իշխան :

ՏԵՍԻՒԼ ԺԱ.

ՆՈՅՆՔ ԵՆ ՆԵՐՍԷՍ

- ՆԵՐ. Այո՛ , Կեցցէ՛ , իշխանդ Վահան :
- Վ.Հ.Ն. Ա՛հ Ներսէս :
- ՆԵՐ. Ես եւս կ'ուխտեմ հաւատարիմ սիրտ մը եւ օգնող բազուկ մը նուիրել , ըստ որում Հայրենեացս ոգին ձեր քաջութեան յանձնուեցաւ , եւ վստահ եմ՝ որ անոր բաղըը ձեր հովանաւորութեան յանձնուելով այսօրուքնէ կ'սկսի իւր երջանիկ թուականը :
- Վ.Հ.Ն. Վեհազուն , չնոր՝ ունիմ ձեր այդ անկեղծ ըզգացմանց , գոր խորտիդ աղնուութիւնն ինձ կը բացատրէ . եւ ձեր այդ անձնուիրութիւնն՝ որ իմ քաջութիւններս պիտի կրկնապատկէ՝ պաշտելի է ինձ . . . սակայն պէտք է յիշենք սա անուրանալի ճշմարտութիւնը թէ մեր զինուորական կազմակերպութիւնը տարտամ եւ տկար է , իսկ առաջիկայ վտանգը՝ մեծ եւ անհրաժեշտ . . . այսպիսի յուսահատ վիճակի մը մէջ՝ եթէ ազօա յոյս մը զմեզ կ' քաջալերէ , անիկայ մեր հայրենասիրական բուռն եռան-

- դրն եւ քաջացանդուզն զգացումն է :՝ Ահա մեր զինուց բաղըն՝ այս յուսոյն ետուէն պիտի երթայ :
- ՆԵՐ. Բայց ուրիշ յոյս մ'ալ ունինք :
- Վ.Հ.Ն. Ի՞նչ պիտի ըլլայ :
- ՆԵՐ. Որմիզդ .
- Վ.Հ.Ն. Որմիզդ . .
- ՆԵՐ. Պարտից բանակին փորձառու սպարապետը . . . ասոր ձեռօք կրնանք Պարսկաստանի աշխարհագրական դրից , ռազմական շարժմանց եւ քաղաքականութեան վրայ լուսաւոր դաղափարները ստանալ եւ մեր օգտին գործածել :
- Վ.Հ.Ն. Շատ աղէկ , բայց այդ Որմիզդը ես ինչո՞ւ չեմ յիշեր :
- ՆԵՐ. Մուշեղին վաղեմի բարեկամը :
- Վ.Հ.Ն. Անիկայ մեռած է :
- ՆԵՐ. Անոր անակնկալ ներկայութիւնն այդ հա՛նրաք ստեց :
- Վ.Հ.Ն. (նոս գաղտնիք մը կայ) է , հիմայ ո՞ւր է :
- ՆԵՐ. Հոս՝ Մուշեղին քով , (Իրսէն աղմուկ)
- Վ.Հ.Ն. Ի՞նչ ձայներ են ասոնք :
- ՆԵՐ. Զօրապետը եւ իշխանք են կարծեմ , իրենց բարեմաղթութիւններն ընելու համար անշուշտ ձեր հրամանին կ'սպասեն :
- Վ.Հ.Ն. Թող Վաղինակ զանոնք ներս մտցնէ , իսկ դուք օտարական իշխանը հոս առաջնորդէք ճիշդ այն ժամանակ երբ բոլոր աւագանիք հոս գումարուած ըլլան . զացէք (Ներսէս կերբայ Վահանի աչ կողմէն , քիչ մը վերջը Վահանի մեկնախօսութեան ժամանակ Վաղինակ աչէն կելնէ , մեռքը մագաղաք մը եւ մեջ տեղի դրո-

ճեմ դարս կեցնէ) շատ բան , կերպով մը ինքզինքս չեմ կրնար համոզել թէ 10 տարուան մեռած մը՝ որուն յուզարկաւորութեան հանդէսին ես ինքս ներկայ եղած եմ, այսօր իւր գերեզմանէն դուրս գալով իւր մէկ հին բարեկամը յիշէ . հոս դաւ մը՝ նենդութիւն մը կայ . սակից դատ . երբ լսուած է՝ որ Պարսիկ մը՝ Հայու մը համար զէնք վերցնէ իւր հայրենակցին ու ազգակցին դէմ . պատմութիւնը իրրեւ հրաշք մը կամ վիպասանութիւն մը միայն կրնայ աւանդել ազգային այս . . հանելուկ մ'է տեսնենք թիւղէս պիտի լուծենք . . . ահա կուգան, օն անդր առնենք մեր պաշտօնական զիրքը: (նէրս կը մտնեն գօրականք , գօրապետք . գօրք , իշխանք , Վաղիմակի առաջնորդութեամբք՝ որուն ձեռքք ոսկեգօծ ծածկոցի մը մէջ ծրարուած հրովարտակ մը . նախ նաժիշտք կը մտնեն ձեռքերսին ծաղիկներ՝ գոբս կուգան Վաղիմակի ոտքերուն տակ կը ձգեն եւ գինքը կը շրջապատեն , հետզհետե տեսարանին երկու կողմը կարգաւ կը կայնին . ետեւի կողմը բազմաթիւն ժողովրդեան Վաղիմակ մէջ տեղը կայնած , քիչ մը լուռեան վերջը բարձր ձայնով հետեւեայ հրովարտակը կը կարդայ):

Մուշեղ Մարդուան Հայաստանի Հայոց մեծայ խընդալ :

Ազգիս անկախութեան յռոտջագիտութեանն ու ազահապտութեանը համար երկար ժամանակ զէնքս ու բազուկս նուիրեցի եւ գրեթէ կենացս մեծագոյն մասը պատերազմական դաշտերը անցուցի ամեն վտանգաւոր պարագայներն առ ոչինչ գրելով : Իմ տեսակէտս մի միայն ազգս լլլալովն , կը վախնայի՝ որ չարաչար ծառայութիւն

մը մատուցած չըլլամ, անոր համար հայրենիքս ինչպէս որ կուզէր ապրիլ , իմ պաշտօնս ալ միշտ սոյն ուղղութեան մէջ կը դնէի , սակայն ալեւոր հասակս այլ եւս չը ներեր՝ որ այն փափուկ պաշտօնին ծանր պատասխանատուութիւնն ստանձնեմ , այս առթիւ սոյն իշխանութիւնըն սրտի գոհունակութեամբ Տարօնոյ իշխան Վահան Վեհադունին յանձնեցի՝ որ իր մատուցած մեծամեծ և հաւատարիմ ծառայութիւններովն արդէն ազդիս համակրութեանն ու սիրոյն արժանացած է : Յուսամ թէ ազգիս մեծամեծ իշխանաց աջակցութեամբը այդ իշխանութիւնն ինձմէ աւելի օրինաւորութեամբ վարելով, Հայաստանի քաղաքական կեանքն ու պատմութիւնը պատկառելի կ'ընէ օտար տէրութեանց եւ ազգաց առաջ :

ՄԱՌՇԵՂ ԻՇԽԱՆ

ՌԲՆ. Հայաստան այսօրուրնէ երջանիկ թուական մի պիտի սկսի Ձեր շնորհիւն եւ ճշմարտապէս կըսեմ՝ թէ այդ պաշտօնը չէ՝ որ զբեզ պիտի պատուէ , այլ դուզանի պիտի փառաւորէք :

ՎՃՐՄ. Ընդունեցէք նաեւ իմ ամենախոնարհ գոհունակութիւնս , Տէր իշխան :

ԱՐՇԱԿ Քաջ է այդ պաշտօնը , ձեր քաջագործութիւնները ձեզ սահմանեցին, քաջդ Վահան կը բարեմայլենք, արդարութեամբ եղած է :

ԳՁՐԿ. Իշխան , մեր անկեղծ յարգանքները նուիրելով հանդերձ , նոր աջակցութիւն մը կ'ուխտենք :

ՎՃՆ. Մեծ գոհունակութեամբ կ'ընդունեմ ձեր անկեղծ շնորհակալիքն եւ փոխադարձ կը խոստանամ՝ որ ցորչախի այս կուրծքը կը բարախի սրտիս մէջ , ազգիս

Եւ հայրենեացս համար պատրաստ պիտի գտնուիմ, ար-
անս մինչեւ վերջին կաթիլը թափելու :
ԲՈՒՈՐՆ. Կեցցէ մեր սպարապետը, կեցցէ Վահան,
յաւերժ կեցցէ :

Ե Ր Գ

Ծագեալ յերկնից աստղն փայլուն
Ահա ժպտի Հայոց բաղլիւն,
Եւ Հայ մուսայն գուարր ՚ի մայն
Կարգայ խրախոյս մատչի յողջոյն :]

Հայկազունք մեզ պաակ
Ձեզ մրցանակ,
Հայրենի
Ազատութիւն :]

Ուխտենք մեկ սիրտ վանեյ ՚ի բաց,
Օն հայկազունք, խեռ եւ նախանն,
Բազկաւ գինու կանգնիք պաշտպան
Մարք իրաւանց մեր սեփական :

Հայկազունք մեզ փառք
Եւն. Եւն. Եւն.

(Երգը լմննալուն Մուշեղ Եւ Ռմիզդ Ներսեսի ա-
ռաջնորդութեամբ կը մտնեն, հոն գտնուողներէն ոմանք
«մեծ իշխանն է» կ'ըսեն. Եւ ոմանք «իշխանք, իշխա-
նը») :

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՆՈՅՆՔ, ՄՈՒՇԵՂ, ՈՐՄԻԶԳ, ՆԵՐՍԵՍ

ՄՇՂ. (Վահան ոտք կ'ելնէ կը դիմաորէ գիւրք եւ
կուգէ իւր նստած արոտին վրայ նստեցնել, իսկ Մու-
շեղ կը մերժէ ըսելով) Որդեանկ, այս իշխանութիւնը քեզ
տալու մտադիր եղած օրէն ի վեր այդ գահին պատուէն
Եւ անոր քաղցր անձկութիւններէն հրամարելով, քեզ
յատկացուցած եմ, քաջ գիտնալով որ անոր փառասիրու-
թեանը նպաստող ճիւղ եւ իցէ զօհողութեանց տակալու-
յաննս պիտի առնես : Աստի, որդեանկ, ամենայն իրա-
ւամբ այտուհետեւ քեզ կը պատկանի անոր վրայ բազմի-
լը . գիտեմ որ ծանր եւ տաժանելի է այդ պաշտօնը,
որուն փորձը քառասուն տարիէ ի վեր իմ անձիս վրայ
ըրած եմ, քայց ահա քեզ աջակից մը եւս կը յանձնեմ
իմ վաղեմի բարեկամս Ռմիզդ իշխանը, որ երկար ժա-
մանակէ ի վեր մեռած կարծուած, այսօր երկինք զը-
թալով իմ ծերութեանս, զանի դարձեալ ինձ կը վերա-
դարձնեն հայրենեաց պաշտպան մը աւելցնելու համար :

Վ. Հ. Ն. Որմիզդ :

ԲՈՒՈՐՆ. Ռմիզդ :

Վ. Հ. Ն. (Ռմիզդը յաւ մը դիտելէն վերջը) Տէր իշխան,
ձեր ինձ յանձնած բարձր պաշտօնին պահանջման համե-
մատ, պէտք եղած աշարջութիւնը ՚ի գործ գնելու մի-
ակ փորձը, նոյն իսկ այս վայրկեանիս հոս գումարուած բոլոր
աւագանեաց զօրաց եւ զօրապետաց ներկայութեանը պի-
տի ցուցնեմ :

ՄՇՂ. Ի՞նչ ըսել է :

ՈՐՄԻՋԴ (Գող մը խորտեցաւ բոլոր երակներուս մեջ)
Վ.ՀՆ. Թող սուէք ինձ մեզ աջակից ըլլալու իշխանին
հարցնել թէ ի՞նքն է արդեօք 16 տարի առաջ Պարսից
Գուշանաց դէմ տուած պատերազմին հրամանատար Որ-
միզդ իշխանը :

ՄՇՂ. Այո ինքն իսկ :

ՈՐՄԻՋԴ (Խորամանկ բշտառակաւնը զիս պիտի կոր-
ծանէ) :

Վ.ՀՆ. Անիկայ , որ մեռաւ :

ՄՇՂ. Այո :

Վ.ՀՆ. Լաւ , բայց իշխանը ինչո՞ւ չը խօսիր , գուցէ մեզ
համար մտացը մէջ մի նոր պատերազմական յատակագիծ
պատրաստել կը խորհի (բազմութեան մէջ շփոթ) :

ՈՐՄԻՋԴ. Իշխանդ Վահան , մեր վաղեմի բարեկամն իմ
մասին խօսած ըլլալով, հարկ չեմ համարիր ձեր այդ ան-
հիմն կասկածանքները փարատելու համար աւելորդ խօս-
քեր ընել :

Վ.ՀՆ. Անհիմն . . . բայց դուք այնպիսի մէկուն ա-
նունք լրանիդ կ'ստնէք որուն յուզարկաւորութեան հան-
դիսին անգամ ներկայ էի :

ՈՐՄԻՋԴ. Ձը կրնար ըլլալ որ ուրիշ Որմիզդի մը յուզար-
կաւորութեան հանդիսին ներկայ գտնուած ըլլաք :

Վ.ՀՆ. Ուրիշ Որմիզդի մը յուզարկաւորութեան հանդէսը
այսօր պիտի կատարուի :

ՈՐՄԻՋԴ. (կորտուեցայ) . . . չեմ համկնար :

ՄՇՂ. Ի՞նչ կըսես , որդեակ :

Վ.ՀՆ. Կըսեմ թէ այս մարդը գառնազգեստ գայլ մը ,

խարդախ Պարսիկ մ'է , որ կը համարձակի ամբողջ Հայ
հասարակութիւնը խաբելու վատ միջոցներու ձեռնար-
կել :

ՈՐՄԻՋԴ. Թող իմ տեղս Մուշեղ իշխանը պատաս-
խանէ :

Վ.ՀՆ. Թշուառ , դու ձերունայ մը տկարացած տե-
սութենէն օգուտ քաղելով ինքզինքդ ազատել կուզես
ըրած յանդգնութեանդ արձանի պատուհասէն , մեռիք
ուրեմն , վատ արանց (Լախտը կը բարձրացնէ) :

ԲՈԼՈՐԸ. Մեռնի , դաւաճանը :

ՄՇՂ. Չախաւորէ բարկութիւնդ , կեցիք . . .

ՈՐՄԻՋԴ. Թո՛ւ , իմայեցէ՛ք , ես . . .


Վ.ՀՆ. Մի սողար ոտքերուս տակ ցած Պարսիկ . (կը
զարնէ) :

ՈՐՄԻՋԴ. Կեցիք , ես Միհրանի եղբայրն եմ (կը մեռնի)

Վ.ՀՆ. Շատ ուշ է . . .

ԲՈԼՈՐԸ. Մեռա՛ւ . . .

ՋԳԻ ՎԱՐՍՊՈՅՐԸ



ԱՐԱՐՈՒԱՅ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԻԼ Ա.

(Մշոյ մեջ Մինրանին պալատին պարտեզը . պարտիզպանն երգելով կաշխատի) :

Ե Ր Գ

Ո՛ն , իմ սքտիկս վարդ մ'ե անյոյս ,
Քոս սերդ՝ ցոյ , ո՛ սիրուն կոյս .
Երէ ցոյես , բուրեմ , բացախմ ,
Առանց քեզի խամրիմ մեռնիմ :

Ո՛ն , անկեղծ կոյս ,
Հատոր հոգւոյս :

(Ձեռքի բանը մեկ ծառի մը կոթնցնելով) Ա՛ն , այս քրտինքներն ՚ի գուր չեն թափիր , անոնք սիրոյ կաթիլներ են . . . բայց շատ հոգնեցայ . . . պահ մը հանգիստ առնեմ (կը նստի) . . . Սիրուն : հայրենիք մ'ունենամ , հայր ունենամ , մայր ունենամ եւ այսպէս տարագիր ապրիմ . . . իշխանադուն մ'ըլլամ , հիմայ այսպիսի զրծուծ հանդերձներ հագնիմ եւ անարգ պաշտօն մը ստանանում եւ կամու օտար աստղի մը տակ իմ ազգատունիս ոխերիմին խարխուղ խրճիթին մէկ խորշը իմ քրտնաթոր ճակատս հանգչեցնեմ գիշերէ գիշեր . . . կը մտա-

ձեմ . . . ներկայ տաժանելի վիճակս անցելոյն հետ կը բաղդատեմ եւ անձս գոհ կը գտնեմ՝ ապագայ երջանկութեան մը համար . . . Ա՛ն . սէր սէր . . . բայց լինչ մոգական գաղտնիք մ'է . . . օտար օրիորդի մը համար՝ մանաւանդ թշնամիի մ'աղջկան համար թողուլ ամեն հաճոյք ամեն վառք , եւ այս դժոխքներ տառապանքը՝ վիշտն ու նեղութիւնն , որ թշուառաց ճակատագիրն է , յանձնառու ըլլալ . եւ ասանկ ցաւալի վիճակ մ'անոր հաճոյք ըլլալու գրաւական համարիլ . . . այս դաղանիքն երբէք չը մեկնուիր . անիկայ սիրոյ մէկ հրաշքն է՝ որ ամեն ըզգայուն սրտի մէջ կը գործէ . . . : Երիտասարդ , երիտասարդուհի կը մտնան աշխարհ , կը կորսնցնեն անձեղնին , իրարու վրայ միայն կը խորհին , իրարու սիրտ գնելու համար ամեն բան կը դոհեն՝ մինչեւ իսկ իրենց կեանքը . այն յուսով թէ՛ գէթ յաւիտենականութեան մէջ շիրար կը վայելեն : Ահա իմ համոզումս ալ այս է .- մի կրնայ գիտաապարտել . նոյն իսկ բնութիւնը սիրով կ'ապրի եւ անոր լգեբին է . . . ան , լուսոյ հրեշտակ մ'է՛ որ այս կողմը կը դիմէ . . . քանի որ վնասը կը անհետմ , սիրտը կը արօղի . . . :

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆ ԵՎ ՕՐԻՈՐԴ

ՕՐ . Պանրտիզպան :
ՊԱՐՏ . Օ՝ , Օրիորդ :
ՕՐ . Բարի առաւօտ կը մաղթեմ ձեզ հասնող :

ՊԱՐՏ . Կերև ի թէ՛ անկողինէն նոր ելած էք :

ՕՐ . Ի՞նչէն գիտէք :

ՊԱՐՏ . Հինգ ժամէ՛ ի վեր առաւօտ եղած է , եւ դուք
դեռ նոր բարի առաւօտ կը մաղթէք :

ՕՐ . Հիմայ սա դատարկ խնդրոյն վրայ վիճելու ժա-
մանակ չ'ունիմ . . . ուր է ինձ խոստացած ծաղիկդ :

ՊԱՐՏ . (Քամիծաղ) Ես ալ այդ կը վնտռեմ , բայց չ'եմ
կրնար գանել գեղեցիկ ծաղիկ մը՝ որ ձեր դէմ մըցի :

ՕՐ . Ինձ հետ դրօնմուլ կուզէք :

ՊԱՐՏ . Չ'է , անկեղծ կը խօսիմ . . . բայց սա ծաղիկը
կարծեմ ձեզ հաճելի կրնայ ըլլալ : (Կը փրցնէ կուտայ)
Սակայն ինչու համար իգական սեռն այսչափ սիրահար է
ծաղիկի . . . :

ՕՐ . Մաղկը կնոջ մը զարդն է , բայց օրիորդի մը ըս-
փոփանքը :

ՊԱՐՏ . Արդէն աղջիկներն ինքնին մէյ մէկ ծաղիկ են :

ՕՐ . Աղջիկ մ' իրեն համար երբէք այդպիսի նշանա-
կութիւն չ'ունի , բայց երիտասարդք՝ անոնց այդպիսի դող-
ալըրիկ անտուններ կուտան :

ՊԱՐՏ . Ի՞նչ ըսել կ'ուզէք . մի թէ ճշմարիտ չէ :

ՕՐ . Մարդիկ՝ աղջկան՝ մը սրտին բարութենէն աւելի
արտաքին գեղեցկութիւնը կը վնտռեն . կը թողուն հոգ-
ւոյն յատկութիւնները , մարմնոյն պչրանաց կը յափշտա-
կուին . կ'ուզեն անոնց չափազանց շողքորթութիւնն՝ եւ
կը համակրին . կը տեսնան անոնց արհեստական գեղեցկու-
թիւնն եւ անմիջապէս կը սիրահարին . . . Երբ համեստ
օրիորդ մը տեսնեն՝ հպարտ է կ'ըսեն . իրաւասէրը՝ խըս-
տուհի մը կը ճանչնան . սկզբունքի տէր աղջիկ մը տեսնեն՝

յտնու է կ'ըսեն . խոհեմ աղջիկն ալ ապուշի տեղ կը դը-
նեն . . . Է՛հ , աղջիկներն այսքան նախատինքէ ազատ
մնալու համար , կամայ ակամայ արհեստական գոյներով
կը գեղեցկանան եւ կը զարդարուին , կը քծնին , կը շող-
քորթեն՝ մինչև մէկու մը հետ ամուսնանան . . . :

ՊԱՐՏ . (Քամիծաղ) Դուք ալ ատոնց կարգէն չ'էք :

ՕՐ . Ինքզինքս դուրելու մտախառութիւնը չ'ունիմ եւ
ոչ ինքզինքս հաւնելու մեծամտութիւնը , բայց պարզա-
սիրութեանս վրայ կը պարծենամ . աղէկ գիտեմ որ երի-
տասարդ մ' եթէ չ'ուզէր իր սիրած աղջկան սրտին հետ
խօսիլ եւ իր երջանկութիւնն անոր մէջ վնտռել , այլ մի-
այն անոր արտաքին երմուլթէն կը խաբուի եւ մնտի ա-
կնկալութեան մը համար իւր երիտասարդութիւնը կը ծա-
խէ , կոյր եւ յիմար է . ասանկ երիտասարդի մը սիրու-
հին ալ միշտ դժբաղդ . որ նոյնպէս արտաքին պատրան-
քէ մը շրպցած՝ իւր կուսագեղ կուրծքը՝ դահճի մը ցուրտ
ճակիւն հանդիստ կը պատրաստէ Ես երջանիկ եմ
որ քեզ ընտրած եմ . . . :

ՊԱՐՏ . Քանի անգամ է որ այդ դիւթիչ խօսքը կը կրկի-
նէք . դուք առաքինի էք , օրիորդ , ես չ'եմ հաւատար
որ դիւ ծաղրէք , բայց չ'եմ ալ հաւատար թէ աղքատ պար-
տիզական մը սիրելու չափ նուատանայ ձեր սիրան՝ որ ա-
մենուն սիրելի է :

ՕՐ . ճշմարիտ երջանկութեան հաճոյքը վայելելու հա-
մար մի թէ բարձր աստղի մը տանկ ծնիլ պէտք է
ըստ իս՝ հարստութենէ , ճոխութենէ , գեղեցկութենէ
աւելի եւ շատ աւելի՝ աղէկ է՝ անկեղծ սրտի մը հետ ապ-
րիլ , անիկայ սիրելի , միայն անոր վրայ խորհիլ , միայն ա-
նոր համար մեռնիլ եւ անոր հետ վայելած բերկրանքը մին-

չեւ յառիտեանս վանութիւն ՚ի միասին տանել . թող աղ-
քատ ըլլայ , դժբաղդ ըլլայ , ինչ վրաս . բաւական է որ
սրտերն սիրոյ հոտանայ մէջ լուխտեն , հոն իրարու հետ
խօսին . ասանկները կրնան միայն համբերատար ըլլալ բազ-
դին արեւածներուն , եւ կողքան՝ թէ իրարմով կ'օտոտին .
ասանկներուն սրտին սէրն՝ Աստուծոյ մը չափ անմահ է .
հոս է ճշմարիտ երջանկութիւնն . . . հարստութիւն , գե-
ղեցկութիւն վաղանցիկ բաներ են :

ՊԱՐՏ . Օրհորդ , դուն ասով բոլոր հարուստները կը
դատապարտես :

ՕՐ . Ո՛չ , այլ սա կ'ուզեմ պնդել՝ թէ ամուսիններ ,
կ'ուզեն հարուստ ըլլան՝ կ'ուզեն աղքատ , երբ իրենց սէ-
րը՝ սրտէ դուրս է , երբ լուրիչ նկատուեցններու համար
խրատ կը սիրեն , միշտ ապերժանիկ են . . . ենթադրենք
թէ ես հարուստ եմ , իշխանուհի եմ եւ դու աղքատ պար-
տիզական մի , բայց իմ կենացս երջանկութիւնն ես :

ՊԱՐՏ . Սիրեցեալդ իմ , մինչդեռ քու սրտիդ զգացում-
ներն անկեղծ կը յայտնես , ես ալ անկեղծաբար այսքանն
միայն կրնամ յայտնել՝ որ Միհրանայ հակառակորդ Հայ
իշխանայ միայն դաւակն եմ . եւ այս վերջին պատերազ-
մին մէջ Միհրանայ վրանն զձեզ տեսնելու՝ սիրահարե-
ցայ . եւ ձեզի հետ ապրելու տենչն , այս սարուկ բազ-
դըն ինձ տանանեց , սակայն երջանիկ եմ :

ՕՐ . (Հայ իշխանագուն մը) Աղգատոհմիդ անունը ,

ՊԱՐՏ : Աղգատոհմիս անունն մի հարցնիր :

ՕՐ . Ուրեմն դեռ ինձմէ կը կատկածիք :

ՊԱՐՏ . Սիրտս վտահ է ձեր վրայ , սակայն անունս
տալով մեր սիրոյն զարգացման ինչ զոռուսներ կրնայ հայ-

թայթել . ասկի զատ՝ դուք պէտք է համոզուիք թէ սէ-
րը քնոյ մէջ ալ կ'իշխէ . թերեւս ասանկ անձեռնհաս ժա-
մու մը , յորում կամքին պաշտօնը դազրած է , այդ շԲԲ-
թունքդ իմ անունս Միհրանին մատնեն :

ՕՐ . Միհրան . ո՛հ եթէ գիտնայիր ճշմարիտը . . . ե-
թէ գիտնայիր՝ թէ ես ալ Հայ իշխանի մը աղջիկն եմ եւ
Միհրանին ձեռքը գերի ինկած . . . :

ՊԱՐՏ . Գուք Հայ . . . ո՛հ ինչ կըսէք , կը խենդեցը-
նէք դիս . ծն , անունդ , անունդ , գոնէ անունդ ըսէ :

ՕՐ . Անունս , ո՛հ , ինչպէս ըսեմ , գոն եղիր , որ քեզ
կը սիրեմ , միթէ բաւական չէ այս :

ՊԱՐՏ . Ո՛հ , հատոր հոգեպս . . . իմ սիրտս սիրոյ սե-
ղան մէ , անոր կենդանի պատկերը դուք էք եւ անոր
երկրպագուն ես . հոն եթէ անձկութիւն մը կայ այս
վայրկենիս՝ ձեր անունս իրձն է այն . ինչ պատճառ ու-
նիք չը յայտնելու . . . ո՛հ , անունդ :

ՕՐ . Անունս է . . . ո՛հ , Միհրան հոս կուգայ . . .
փախչիմ , իսկ դու աշխատէ՝ որ յայտնի չընես զիս տես-
նելդ : (Կերբայ) :

ՏԵՍԻՒ Գ .

ՊԱՐՏԻԶՊԱՆԸ (կաշխատի) ՄԵՀՐԱՆ , ԱՐԲԱԿ , ԳԱՐԵՀ

ՄՀՐՆ . (Պարտիզպանը ջը տեսնելով) Մեծ դեր մ'ու-
նինք խաղալու :

ԳՐՀ . (Գաղտնի Միհրանին) Բայց Պարտիզպանը :
ՄՀՐՆ . Հայ . . . ինչ կըսէք հոս , կ'աշխատիք :

ՊԱՐՏ. ճակատագիրս է ինչ ընեմ . . . (միւսները գաղտնի կը խօսակցիցին)

ՄՀՐՆ. Հիմայ թող քու աշխատութիւնդ եւ քաշուէ :

ՊԱՐՏ. Ետտ աղէկ (մեկուսի) խորհուրդ ունենալու են (ո՛ն, Հայ և Էդէր . .) : (Կերթայ) :

ՏԵՍԻԼ Դ.

ՄԻՀՐԱՆ, ԱՐԲԱԿ, ԴԱՐԵՅ

ՄՀՐՆ. Դարե՛հ, ինչ բանի վրայ կը խօսէի :

ԴՐՀ. Տէր իմ, կըսէիք՝ թէ մեծ դեր մ'ունինք խաղալու :

ՄՀՐՆ. Բայց ինչ էր բաժնս :

ԱՐԲԿ. Քիչ մ'առաջ կըսէիք՝ թէ ամեն կողմէ յաջող է գործերնիս :

ՄՀՐՆ. Հնա, միտքս եկաւ . . . դուք գիտէք՝ որ եղբայրս շատ հնարագէտ է . . . ներկայէս 16 տարի առաջ Պարսից Գուշանայ դէմ բացած պատերազմին անցքերուն վրայ կատարեալ տեղեկութիւն ունի, հիմայ մեր հայրենեաց մեծ ծառայութիւն մ'ընելու համար ինքզինքը Արսիզը ձեւացնելով Մուշեղին գացած է, իբր այն թէ Պարսկաստանէն վշտացած Մուշեղին մեծ ծառայութիւններ պիտի ընէ . . . ասանկ հնարքով կը յուսամ որ քիչ միջոցի մէջ Մուշեղ ռիտերիմս սատակել կը յաջողի . այն ժամանակ առանց պատերազմի Հայաստան մեր իշխանութեան տակ կը նուաճի :

ԴՐՀ. Տէր իշխան, ճշմարիտ է՝ որ յոյսը շատ ժա-

մանակ ապագային մէջ մեծ յաղթանակներ կրնէ, եւ շատ նպատակներ կը վարձատրէ, սակայն շատ ժամանակ ալ չը յուսացուած ձախող արդիւնքներու տեղի կուտայ : ՄՀՐՆ. Բայց այդ յոյսն ինձ համար հաստատուն է :

ԱՐԲԿ. Հաստատուն կարծուած յոյսերն ալ շատ ժամանակ մեծ վտանգներ ունին, թէ եւ անոնցմէ զերծ ալ ըլլայ, բայց կրնայ ըլլալ՝ որ այս արդիւնքը յուսացուածին չափ յաջող չ'ըլլայ :

ՄՀՐՆ. Եղբորս ճարտարմտութիւնը այդ ձեր կասկածներն կը փարատէ, բայց եւթագրենք՝ որ չը յաջողի, դարձեալ Մուշեղին գործը ըմբոստի պէս է :

ԱՐԲԿ. Հարկաւ խորհած էք :

ԴՐՀ. Անտարակնց ուրիշ աղբու միջոցներ ձեռք առած էք :

ՄՀՐՆ. Անշուշտ . . . Վահան Մուշեղին դէմ ապրտամբած է :

ԱՐԲԿ. Ատիկայ ինչ օգուտ կրնայ ըլլալ :

ԴՐՀ. Տէր իշխան, ճշակից լսած էք :

ՄՀՐՆ. Երկու կողմանէ պատգամաւորութիւն ընդունեցի . Մուշեղ կաղաչէ որ հաշտուիմ եւ հարկ մ'ալ տալ կը խոտանայ եթէ Մուշէն մեկնիմ. նոյն պատգամաւորէն իմացայ՝ որ Վահան ապստամբած է Մուշեղէն եւ անոր կ'սպառնայ . հիմայ Մուշեղ Վահանը զսպելու համար իմ հաշտութեանս կը կարօտի :

ԴՐՀ. Գործը կարգին է :

ԱՐԲԿ. Մեր ուզածն ալ այդ էր :

ԴՐՀ. Հապա Վահանայ պատգամաւորութիւնը :

ՄՀՐՆ. Վահան իր ապստամբութիւնն յայտնելով կը խոտանայ իմ հրամաններուս համաձայն վարուիլ :

ԳՐՀ. Երկուքին պատգամաւորութիւնն ալ օգտակար է մեզ համար . . . բայց դուք ինչ որոշում ըրիք :

ՄՀՐՆ. Վահան գործունեայ Հայ մ'է . անոր ձեռք շատ գործ կրնամք անենել , անոր համար հրամայեցի՛ որ հոս գայ եւ թերեւս այսօր կը հասնի . իսկ Մուշեղն ալ ապահովեցի՛ որ ըստ որում ինքն զիջում կրնէ՛ երբէք իր հայրենեաց յիսաս մը չընեմ :

ԱՐԲԿ. Բայց դուք վերջնական երդմամբ որոշած էիք Մուշեղը սպաննել :

ՄՀՐՆ. Արդէն այդ ներքին ուխտս է , բայց զայն ապահովելու քաղաքական մէկ ձեւ մ'է , որպէս զի ինքն վստահ ըլլալով պատերազմական պատրաստութիւններու հոգ չտանի , հետեւաբար առանց դժուարութեան մեր նպատակին հասնինք :

ԳՐՀ. Շատ աղէկ խորհր եք :

ԱՐԲԿ. (Ոտնաձայն) Լռենք , կարծեմ Վահանն է :

ԳՐՀ. Այն , նոյն ինքն է :

ՏԵՍԻՆ Ե.

ՆՈՅՆՔ , ՎԱՀԱՆ (Մեկ քանի գօրք)

ՎՀՆ. (Հասկցայ խորհուրդնին) Մեծ հաղարագետ , ձեր հրամանն անա կատարել փութացի :

ՄՀՐՆ. Շնորհակալ եմ ձեզմէ , Վահան :

ԳՐՀ. (Միմբանայ խելք ջր հասնիք) :

ՄՀՐՆ. Ինչ եղաւ՝ որ Մուշեղէն ապօտամբեցար :

ՎՀՆ. (խելքովն բան պիտի հասկնայ) Մուշեղին փա-

ռասիրական իղձն գոհ չ'ըլլալով իր տիրած երկիրներէն , հիմայ ալ կ'աշխատի Տարօնոյ վիճակն իմ ձեռքէս յափըտակել , այս առթիւ որոշած եմ՝ մինչդեռ կենդանութիւնը երակներուս մէջ կը խլրտի՛ մրցիլ նորա փառասիրութեանը դէմ , բայց միշտ ձեր հրամաններուն հպատակելու դաշամբ : (միւս յերասանք գաղտնի կը խօսին) :

ՄՀՐՆ. (պիտի յաջողինք) Դուք վառվառն եւ հաւատարիմ մէկն ըլլալուդ համար՝ շատ կը սիրեմ . անա այս վայրկենէս կատարեալ ազատութիւն կը շնորհեմ . ասին ճիգդ թափէ Մուշեղին երկիրներն աւերակ դարձնելու եթէ բազուկներդ յոգնին , մի վճատիր . Միմբանայ աջը՝ քեզի կ'օգնէ . . ես վստահ եմ քու հնարագիտութեանդ վրայ՝ որ պիտի յաջողիս . գիտցած ըլլաս որ՝ քու հաւատարիմ ծառայութիւններդ անվարձ չը պիտի մնան :

ՎՀՆ. Տէր հաղարագետ , ես հաստատ որոշած եմ եթէ զինուց բազըր ինձ օժանդակէ , Պարսից իշխանութեան տակ ձգել բոլոր Հայաստան . ես լաւ կ'ընտրեմ օտարի մը քաղցր լուծը կրել , քան իմ հայրենակցիս փառասիրութեան ինկարկու ըլլալ . մանաւանդ՝ եթէ յաջողիմ Մուշեղն սատակել . . . ուխտած եմ անոր սուկայի գերեզմանին վրայ իմ արիւնտտ սուրս պիտի կանգնեմ 'ի նշան իւր փառասիրութեան , որուն ամբողջ մարդկութիւնն կուզէ զոհել : (Բարի նպատակի մը համար ամեն հեղձիք քնելու է)

ՄՀՐՆ. (Շողորորբեւու եմ) Պարսկաստան ապերախտ չէ , մանաւանդ քեզի նման քաջի մը համար , որ անգին կեանքդ վտանգի առաջ պիտի դնես . . . անա քեզի տուած վազօր արտօնութիւններս կրնաս համար-

ձակ ի գործ դնել . . . քու քաջութեանդ փոխարինութիւնը ինձ յանձնէ :

Վ. Հ. Ն. (Բռն ժամանակն է) Բայց բան մը կայ լսած էք :

Ա. Բ. Կ. (Տեսնենք ի՞նչ պիտի ըլլայ) :

Մ. Հ. Բ. Ո՛չ :

Վ. Հ. Ն. Գաղտնիք մը :

Մ. Հ. Բ. Ըսէ տեսնենք :

Վ. Հ. Ն. Բայց . . . (չորս կողմը կը նայի) :

Մ. Հ. Բ. Մի կասկածիք, իմ հաւատարիմներս չեն :

Վ. Հ. Ն. Միայն դուք պէտք է լսէք :

Մ. Հ. Բ. (Իրենցերուն) Դուքս ելէք :

Ա. Բ. Կ. (Առ Դարեհ) Բան մ'ըզպուռ է :

Գ. Բ. Հ. (Առ Արքայ) Հարկաւ : (Կ'երբան) :

ՏԵՍԻԼ 2 .

ՄԻ ՀՐԱՆ , ՎԱՀԱՆ :

Մ. Հ. Բ. Մենք մեզի ենք , կրնաս համարձակ յայտնել : (Ի՞նչ պիտի ըլլայ) :

Վ. Հ. Ն. (Մեկուսի) Մեծ խաղ մ'է այս , (չորս կողմը կը նայի) Ձեր եղբայրն հիմայ ուր է :

Մ. Հ. Բ. (Ի՞նչ քրտէ կուզէ) Ինչ կայ որ :

Վ. Հ. Ն. Բան մը լսած եմ :

Մ. Հ. Բ. (Արտորանօք) Շուտ յայտնեցէք :

Վ. Հ. Ն. Առած տեղեկութեանս նայելով , եղբայրդ մատեան գնդին մեռած սպարապետին կերպարանօք Մուշե-

ղին է ներկայացեր , չեմ գիտեր ինչ գաղտնի նպատակաւ , բայց Մուշեղի խորագիտութիւնն՝ այդ կեղծիքը խայտառակած է :

Մ. Հ. Բ. (Աննամբէ ուրեամբ) Վ. Երջը :

Վ. Հ. Ն. Մուշեղ բարեկանալով չղթայներու դարկեր , ողկան ամուրի մութ գնտանին մէջ բանտարկած է չիմայ :

Մ. Հ. Բ. Այդ լուրը ուսկից առած էք :

Վ. Հ. Ն. Այս գաղտնիքը քովդ մնայ . . . իմ լրտեսներէս :

Մ. Հ. Բ. Այդ չիտակ է , քեզմէ բան ծածկել չ'ըլլար . . . ինձ խորհուրդ մը տուր . . . հիմայ ինչ միջոց ձեռք առնելու է եղբայրս անվնաս ազատելու համար :

Վ. Հ. Ն. Դիւրին միջոց մը կայ :

Մ. Հ. Բ. Շուտ ըսէք :

Վ. Հ. Ն. Եթէ հաճէք 5000 հեծելազօր տալ ինձ , գիշեր ժամանակ Ողկան ամուրին վրայ յարձակելով , ոչ միայն եղբայրդ կրնամ ազատել , այլ եւ Մուշեղ ռիսերիմէ չըզթայակապ գերիի մը նման ձեր առաջը պիտի տեսնեք մօտ օրերս :

Մ. Հ. Բ. Ուրեմն ատանկ ընենք . . . Արբակ . . .

Վ. Հ. Ն. Կեցիք. Արբակը ո՞վ պիտի ըլլայ :

Մ. Հ. Բ. Ատենադպիրս :

Վ. Հ. Ն. Բայց , տէր իմ , ասանկ գաղտնի գործ մը գլուխ հանելու համար , այս անողբայ բոյսերէն անգամ զգուշանալու է :

Մ. Հ. Բ. Շատ աղէկ , ես կը գրեմ : (բռնորք կառնէ եւ կը գրէ)

Վ. Հ. Ն. (Գործը կես մը դիւրացուցիմք) :

ՄՀՐՆ. Իմ սիրելի հրամանատարս : (կը գրե) :
 Վ.Հ.Ն. (Պատեն ժամանակ մ'ե ասիկայ հոս շրջելու) :
 ՄՀՐՆ. Ահա Գայլ Վահանն քեզի զրկեցի : (կը գրե) :
 Վ.Հ.Ն. (Միայն խեղճ Պարտիզպան մը կայ ան այ կը
 բնանայ) :

ՄՀՐՆ. 5000 ընտիր հեծեալ զօրք իրեն յանձնէ : (կը
 գրե) :

Վ.Հ.Ն. (Մեկուսի) Ասկից աղէկ ժամանակ չ'ըլլար ,
 զարնելու է : (սուրբ քիչ մը կը բաշէ) :

ՄՀՐՆ. Պատուիրեա իրենց՝ որ Վահանին կատարեալ հը-
 նագանդութիւն ընեն : (կը գրե) :

Վ.Հ.Ն. (Բայց պայտաւկանները հոս մօտերս են . .
 խոնտմութիւն չ'ե) :

ՄՀՐՆ. Այս հրամանս գաղտնի պիտի մնայ : (կը գրե) :

Վ.Հ.Ն. (Մեկուսի) Ուրիշ առթի մը սպասելու է : (Սու-
 բբ տեղը կը դնէ)

ՄՀՐՆ. Պարսից Սպարապետ Միհրան : (կը գրե եւ կը
 լանճնէ :) Ա՛ն : (կուտայ) :

Վ.Ն. (Ծոցը դնելով .) Տէր իմ , երբէք մի նեղուիք .
 ինչ որ է ձեր նպատակը պիտի կատարի :

ՄՐՆ. Ո՛հ , Վահան , եթէ յաջողիք Մուշեղ սխերիսին
 գէթ ցուրտ գլխին ինձ յանձնել՝ որ կատարութիւնս անոր
 վրայ յազեցնեմ . . անոր բոլոր իշխանութիւնը ձեզի սը-
 ւախ յանձնեմ :

Վ.Ն. Դուք աներկբայ եղի՞ք :

ՄՐՆ. Բայց շուտ , ժամանակ չը կօրսնջնենք :

Վ.Ն. Անհող եղիք : (Դուն կընաս Մուշեղին ստուերն
 տեսնել) : (Կ'երբայ) :

ՏԵՍԻԼ Է

ՄԻՀՐԱՆ (Առանձին)

Հիմայ հասկցայ՝ որ յոյսերն ալ մեծ վտանգներ ու-
 նին եղեր . . . բայց դարձեալ չեմ յուսահատիր . մինչ-
 դեռ Վահան Մուշեղին դէմ ապստամբած է , շատ դի-
 րութեամբ կրնամ եղբայրս ազատել , եւ Մուշեղ շղթա-
 յակապ իմ ոտուըններուս տակ տեսնել . . . աս բանիս
 վրայ երբէք չեմ կասկածիր , ինչու որ՝ եթէ իմ բանակ-
 ներս անգամ անկարող ըլլան Հայաստան նուաճելու , Հայ
 մը բաւական է իւր հայրենիքը մատնելու . Է՛հ , Վա-
 հանին խոտապած վարձս ալ արդէն յայտնի է . իր գոր-
 ծած յաղթութիւններուն զո՛հ ինքը պիտի ընեմ . . . եր-
 թամ իմ հաւատարիմներս գտնամ այս մեծ գործին հա-
 մար խորհելու : (Կ'երբայ) :

Օր. (Դրսէն) Օգնութիւն , օգնութիւն . . . :

ՏԵՍԻԼ Ը

(Պարտիզպան բունեն սրափելով)

Այս ինչ անոյշ ձայն էր՝ որ խոր քնոյս մէջէն զար-
 թոյց զիս . . . կարծես անմահութեան մէջ կրկնային հը-
 րեշտակաց միոյն ձայնն էր , որ անծանօթ օրիորդին
 պատկիրն ունէր , ինչ անմեղ . . . ինծի հետ կը վար-
 ուէր . . . սիրտ կուտար ինծի՝ որ իր վրայ վստահ ըլ-

լամ . . . իր քնքուշ ձեռուրները կուրծքիս վրայ դրած մինչև գերեզման կուխտէր զիս սիրել , ո՛հ , անկեղծ սէր , անմահ սէր . . . :

Օր . (Դրսեմ) Թողէք զիս , ինչ կուղէք ինձմէ :

ՊԱՐՏ . Ո՛հ , երազ չէ , օրիորդին ձայնն է , պահուըտինք եւ մտիկ ընենք : (Ծառի մը ետեւ կերբայ) :

ՏԵՍԻԼ Թ .

ՊԱՐՏԻԶՊԱՆ , ՕՐ . (Ետեւեւ ինկած) ԿԻՒՐՈՍ

ՕՐ . Թո՛ղ զիս կիւրս :

ՊԱՐՏ . (Բեկուսի) Միհրանին տղան է (մեկ կողմ կը պահուըտի) :

ԿՐՍ . Հաճութիւն տուր :

ՕՐ . Ի՞նչ բանի :

ԿՐՍ . Ձիս սիրելու :

ՊԱՐՏ . (Ինչպէ՛ս) :

ՕՐ . Ձը պիտի կրնամ այդ առաջարկութիւնը ընդունել :

ԿՐՍ . Օրիորդ , գիտցիր՝ որ մեր գերուհին ես :

ՊԱՐՏ . (Ա՛հ , բշուտառական) :

ՕՐ . Ես գերուհի մ' եմ , չ'եմ ուրանար . բայց պատիւունիմ :

ԿՐՍ . Գերի մ' իր տիրոջ կամքին միշտ պէտք է հնազանդի :

ՊԱՐՏ . (Այ ջ' եմ դիմանար) :

ՕՐ . Ձիս առանձին թողէք , պարապ տեղն մի աշխատիք . . . սէրն անուաճելի է :

ԿՐՍ . Ես գիտեմ նուաճել . . հիմայ խօսք պիտի տաս (Բռնաբարել կ'ուզե) :

ՊԱՐՏ . (Հոգուոյ մեջ համբերութիւնն սպասեցաւ) :

ՕՐ . Անգին գնա , իմ մահուանս պատճառ պիտի ըլլաս :

ՊԱՐՏ . (Բարձր) Այ բաւական եղաւ համբերութիւնս . (Բանը վերուցած՝ Միւրանին տղուն վրայ կը յարձակի) . ինչ վայրենութիւն է այս ըրածդ :

ԿՐՍ . (Ես քաշուելով) Դձու ինչ կ'ո գես , վնաս ծառայ . . ով կայ հոտ . հասէք բռնեցէք սա թշուառականը (Ձօրքեր կը հասնին եւ կ'սկսին կապել) :

ՕՐ . Կեցէք , ինչ կ'ընէք . անիկայ անմեղ է . յանցանք չ'ունի . . . այլ , աւանդ , զիս չ'են լսեր :

ԿՐՍ . Տարէք սա թշուառականն . իւր բաժինը մշտնջենաւոր բանս մ' ըլլայ :

ՊԱՐՏ . Բանտերն ու կապանքներն որչափ ալ սոսկալի ըլլան , չ'են կրնար արատաւորել անմեղի մը պատիւն . իսկ դու՝ որ խարդախութեամբ համարձակեցար անմեղ կուսի մը պատիւն բռնաբարելու վորձն ընել , առաջի Աստուծոյ եւ մարդկան վատ մ' ես . եւ արդար Աստուած վրէժիմնորդ պիտի ըլլայ քեզի , խարդախ աշուական . տարէք զիս , աւելի աղէկ է բանտին թանձր ու մութ պատերը , քան այս դարդարեալ չուառականին երեսը :


ԿՐՍ . Թշուառական , դեռ կը համարձակիս . . տարէք զինքը : (Կը տանին) :

ՕՐ . Ներէ ինձ , բարեկամս :

ՊԱՐՏ . Ա՛հ , թերեւս երկնից մէջ կը տեսնուիւնք , մընաս բարեալ :

ՄԲ . Խեղճ երիտասարդ , խմ պատճառաւ , ան . . (Կիւնայ կը մարի) :

ՁԳԻ ՎԱՐԱԳՈՅԵՐՆ



ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԲԱՐԳ

ՏԵՍԻԼ Ա.

Տեսարանն է Օձ քաղաքին առջեւ՝ դաշտին վրայ . քաղաքին պարսպին վրայ Հայ գօրքերն զինավառ . Պարսից գօրաց գգեստները հագած . դաշտին վրայ Պարսից գօրքը պառկած կը քնանան . անոնց հետ կը քնանայ նաեւ Գարեգին . - վարագոյրը կը բացուի :

ՎԱՀԱՆ Է. (ծպտեալ) ՄՈՒՇԵՂ՝

ՎՆ . (Տեսարան էլնելով) Համարձակ եկէք , կը զընաման :

ՄՇՂ . (Ետեւէն ներս մտնելով) Սոսկալի անտառ մը ձեւացած են :

ՎՀՆ . Քանի որ առաջ՝ որ կը պատռէի քեզի՝ թէ Միհրանայ եղբօր մահը չայաստանին կենդանութիւն պիտի սայ , թերեւս երեւակայութիւն մը կը թուէր ձեզ . այո ,

չէիք ուզեր հաւատալ , եւ ամեն խօսածնիդ կասկածենալ նով լեցուն էր . հիմայ անա տըքովնիդ անեք եւ ալ մի տարակուսիք մեր բաղդին վրայ , որուն առջեւ ամեն դժուարութիւններ կը խոնարհին :

ՄՇՂ . Բայց այդպէս վարուելուս երբէք պէտք չէ վըշտանաք . այս տեսակ հնարագիտութիւն անցեալ եւ ներկայ մեծամեծ դէպքերուն մէջ՝ երբէք չէ լսուած , եւ մինչեւ հիմայ պատմութեան մէջ չէ տեսուած :

ՎՀՆ . Այդ շիտակ է , չ'ուրացուիր . բայց հայրենասիրութիւնը կրնայ հրաշքներ գործել : Եթէ կոյր փառասիրութիւնը մեր մէջ խօսէր , եւ տիրելու տենչը մեր ձեռք զէնք տար , չ'էինք կրնար յաջողիլ թերեւս կորսնցնէինք ալ . բայց քանի որ հայրենեաց ճշմարիտ սէրն է մեր սրբտերը զրդուող , ամեն վտանգ մինչեւ իսկ մահը՝ խաղալիկ կրնան ըլլալ մեր բաղդին :

ՄՇՂ . (Պարսպին վրայի գօրքերը տեսնելով) Վահան , (Յած) պարսպի գօրքերը կարծեմ զիս տեսան :

ՎՀՆ . Անոնք մեր գօրքերն են :

ՄՇՂ . Բայց Պարսից հաղուսաներ հաղած են :

ՎՀՆ . Ես հաղուցած եմ :

ՄՇՂ . Ո՛ւսկից դուք այդքան հանդերձ :

ՎՀՆ . Ասկէ քանի շարաթ առաջ հինգ հազար հեծելազօր Պարսիկ առի Միհրանէն , բոլորն ալ բերելով՝ Հայոց առնները բաժնեցի , եւ բոլորն ալ խեղդել տալով՝ անոնց հանդերձները մեր գօրքերուն հաղուցած եմ , որպէս զի այս նոր բերել տուած զօրքերս ալ (Պառկած գօրքերը ցուցնելով) անոնց սատակել տամ . . . անա այսքան մը կասկածդ փարատելէն վերջը՝ կրնաք երթալ հանդիստընել :

ՄՇՂ . Գոհ եմ ձեզմէ , Վահան . (Կերբայ) :

ՏԵՍԻԼ Բ.

ՎԱՀԱՆ (Առանձին) ԶՐԳՆ ('ի բուն)

ՎՀՆ . Զք կրնար ըլլալ որ ասոնք հոս պառկած տեղերնին սատակել տամ . (կը մտածե) ոչ , խոհեմութիւն չ'է . կրնայ ըլլալ որ ռաից արտփիւնը , զինուց շառայիւնը զիրենք արթնցնէ , այնուհետեւ ծագած վտանգին առաջն առնելու համար մեծ նեղութիւններ կրենք . . պէտք է առջի որոշումն 'ի գործ գնեմ . նախ Գարեգինն արթնցընենք . (Յսւծ ձայնով) Գճրեզին , Գճրեզին

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆ ԷՆ ԳԱՐԵԳԻՆ

ԳՐԳՆ . ՀԷ . (Նլնելով) ո՞վ է զիս կանչողը . ա՛հ , դուք էք , տէր իշխան . ի՛նչ կայ , ի՛նչու , ի՛նչու այսպէս գաղտագողի . . .

ՎՀՆ . կամաց խօսէ :

ԳՐԳՆ . Ներեցէք , դեռ նոր սթափեցայ . ի՛նչ կայ :

ՎՀՆ . Տես , ամենքը խոր քնոյ մէջ են , եւ ոչ մէկը կը շարժի :

ԳՐԳՆ . Տամնուչորս ժամ առանց շունչ առնելու ձամբայ քայլած են . . բայց ի՛նչ է զիտաւորութիւննիր :

ՎՀՆ . Ազգիս եւ միանգամայն որդւոյս Սմբատին վրէժը լուծել . . հաւատն , սիրելիս , երբոր իմ Սմբատս պատերազմի դաշտը՝ Պարսից արիւնուռւշա զէնքերուն տակ

իւր մատող հասակը կորսնցուց՝ չ'զգացի այն վիշտն , որքան հիմայ կ'զգամ հայրենեացս վտանգին համար . . .

ԳՐԳՆ . Բայց ստոյգ գիտէք , մեռած է :

ՎՀՆ . Զը գիտեմ . բայց այն օրէն 'ի վեր չ'կայ մահկանացուաց մէջ , եւ իմ սիրտս այնպիսի վիշտ մը՝ ցումը զգաց , զոր այսօր աւելի սաստիկ կերպով կ'զգամ՝ անննելով Խոսրովն ու Միհրանն , որք իրենց յոյսը բանակներուն վրայ դրած՝ Հայրենիքս կ'ուզեն արեան դաշտ մը դարձնել . քանի որ այս դառն յիշատակները միաքս կուգան , չ'եմ կրնար սրտիս մէջ մտնչող վրէժինդրութեան ձայնը մարել , որ անդադար կը պուայ . « վրէժինդրութիւն . . մեռնին Պարսիկները . իրենց շանարզ սկզբունքներն իրենց արեան մէջ խեղդէ . . » :

ԳՐԳՆ . Տէր , ի՛նչ կ'ընէք . չափաւորեցէք ձեր բարկութիւնն , եւ ձեռնադրկելիք գործոյն վրայ ուղղակի խորհեցէք :

ՎՀՆ . ձշմարիտէ . մտտի խօսքերով ժամանակ չ'անցընենք : Հիմայ դուն ուղղակի բերդն ել , եւ ի՛նչ հրահանգներ որ տուած եմ՝ զանոնք 'ի գործ գիր . . շուտ գնա , ժամանակ չ'անցնի :

ԳՐԳՆ . Անմիշտպէս : (Կերբայ) :

ՏԵՍԻԼ Դ .

ՎԱՀԱՆ (Առանձին)

(Բերդապան գօրքերը բերդին վրայ . — Պարսից գօրքերն դաշտին վրայ 'ի բուն) :

ՎՀՆ . Ո՞վ ողիք վրէժինդրութեան , պաշարեցէք զի՞

ձեր կատարի առարկաներով . . դիտեմ որ մարդու ար-
խն թափելը՝ բնութեան կարգադրութեանը դէմ՝ աննե-
րելի ոճիր մ' է , սակայն այս բոլոր դազան է . ասոր ար-
խնն ու դոյութիւնն՝ Աստուծոյ ամբողջն նախատինք են .
սէտք է բոլորովին բնաջինջ ընել : Հն , աղէկ միտքս ե-
կա . . (Պարսպին ստորոտը կերբայ) Արչակ , պատուի-
րէ զօրականաց՝ որ չ'ըլլայ թէ ձայն հանեն . Պարսից զօ-
րաց հետ նշանացի խօսին , եւ ինչ որ Գարեգին պիտի
ըսէ՝ մտիկ ըրէք : (Ասդին կուգայ) Ես ալ երթամ՝ Միշ-
րանին պատգամաւոր արձակեմ : (կերբայ) .

ՏԵՍԻԼ Ե.

ԳԱՐԵԳԻՆ (Բերդին վրայ կլնելով) !

Աջակողմեան բանակ , երբ Պարսից բանակը ներս մըտ-
նէ , դուք յաղթական փողերն հնչեցուցէք . . ձախակող-
մեանք , դուք ալ ձանապարհին նեղ անցքը բռնեցէք . ա-
մենքնիւ ալ սուսերամերկ հոն սպասեցէք . Պարսից բա-
նակը ներս մտնելուն անմիջապէս Յունական հուրը վա-
ռեցէք . . Ո՛ւր են յառաջապահները . . դուք ալ դը-
րան ներսի կողմը պահպանեցէք՝ որ վախչելու ժամանակ
չ'ունենան . որքան դասավիջ Պարսիկ ձեր առաջ ելնեն՝
անմիջապէս զարկէք : Իրօչակիր , շուտ Պարսկական դը-
րօշը պարզէ . այս օրը՝ Հայութեան նշաւոր օրն է :
(վար կ'իջնայ) :

ՏԵՍԻԼ Զ.

ՊԱՐՍԻՑ ՀԱՐԻԻՐԱՊԵՏԸ (Արքննայով)

Ի՞նչ աղաղակներ են . . քուս խոովեցաւ : (Պառկած
գօրքերը դիտելով) Մերիններն ամենն ալ քնացած են :
Ո՛ւսկից եկան այս անսովոր ձայները . չ'ըլլայ որ թշնա-
միները մեզ պաշարեն . (Չորս կողմը կը նայի) մարդ չը-
կայ՝ երեւակայութիւն ըլլալու է . . : Բայց Գարեգինն
ալ հոս չ'է . ո՛ւր գացեր է . . . Հայոց անմարդի դաշտե-
րըն անգամ սոսկում կը ձգեն մարդուս օրտին մէջ . հոս
վարանիլ չ'ըլլար՝ ոտքի ելնեմ : (կ'ելնէ) :

ՏԵՍԻԼ Է.

ԳԱՐԵԳԻՆ ԵՒ ՀԱՐԻԻՐԱՊԵՏ (Զօրքն 'ի բուն)

ԳՐԳՆ . Հնրիւրապեա , արթնցնէր էք :
ՀՐՊՏ . Ահագին աղմուկ մը դիտ խոովեց :
ԳՐԳՆ . Բերդին վրայի Պարսից զօրքերն են . աւաւսիլ :
(Ապուշ մ'է , ի՞նչ պիտի հասկնայ) :
ՀՐՊՏ . Իբաւ է . . . Ինչ գործ ունին Պարսից զօրքերն
այդ տեղ :
ԳՐԳՆ . Ուրախութիւննիս նայինք , ամեն բան յաջող-
ութեան մէջ է . . անոնք միջնաբերդը առին եւ քաղա-
քը պաշարած են , որ նեղը մտնելով որոշած է անձնա-
տուր ըլլալ . հիմայ մեք ալ յաղթանակաւ ներս պիտի մըտ-
նենք :

ՀՐՊՏ . Ուրեմն ժամանակ չը կորսնցնենք :
 ԳՐԳՆ . Ձայնենք զօրքերուն :
 ՀՐՊՏ . Օ՛րն , զօրականք , զինուորք , զրօշակերք ելէք ,
 (Զօրքերն կ'ալ քննան) :

ՏԵՍԻԼ Ը .

ԳԱՐԵԳԻՆ , ՀԱՐԻԻՐԱՊԵՏ , ԶՕՐԳ

ԳՐԳՆ . Իւրաքանչիւրն իւր տեղը . (Յերդին վրայի
 գօրքերն՝ դաշտիններուն բարեւ կուտան եւ նշանացի կը
 խօսին . նոյնպէս ալ վարինները) :

ՀՐՊՏ . Ամենքդ ձեր տասնապետներուն հնազանդեցէք .
 Տն , մերկացէք զէնքերնիդ . . բարձրացուցէք զրօշակները :
 ԳՐԳՆ . (Այն դրօշներուն հետ իրենց դիակներն ալ պի-
 տի բարձրանան) :

ՀՐՊՏ . Հրամանատարներ , դաս դաս կարդեցէք՝ ձեր գօր-
 քերը . Պարսկաստանէն առելի ազէկ երկրի մը տէր պիտի
 ըլլանք այսօր :

ԳՐԳՆ . (Եեղմերը չ'են գիտեր՝ քե Հայաստան իրենց
 գերեզմանը պիտի ըլլայ) :

ՀՐՊՏ . Եթէ ձեր մէջէն մէկուն զէնքն յաջողի Պարսկաս-
 տանի սխերիմ Մուշէ չը սատակելու , այն ուրն՝ Պարս-
 կաստանի բարերարը պիտի սնուանի :

ԳՐԳՆ . (Քուսենն նոր արքնցած ըլլալուն կը բանդա-
 գուշէ) :

ՀՐՊՏ . Ե՛հ , ահա զօրքերը կազմ եւ պատարտ են ;
 հիմայ ինչ ընթացք պիտի բռնենք :

ԳՐԳՆ . Օ՛րն ուրեմն , զիմենք . (Առ գօրս) ամենեւին
 դժուարութիւն մը չկայ , ամեն բան դիւրացած է . . եթէ
 անձնատուր ըլլալնէն վերջը՝ տկար ճիգեր ընողներ զրա-
 նուին ձեր դէմ , որ չ'եմ յուսար ամենեւին , մի ինչայէք
 զարկէք , սատակեցէք . (Արդէն Հայոս ստոյներ անգամ
 չը պիտի տեսնեն) Տն , յառաջ զիմենք : (Ներսէն յաղ-
 քական երգերու ձայն . — դուրսիններն հետեւեալ երգով
 ներս կը խառնեն , եւ պարսպին դռները կը գոցուին վը-
 րայներուն) :

ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԳ

Ոսոխն գեներեկեց , ռոսխն վատաշուք . . .
 Ուսք հրճուեացին ընդ գոռ . զինուք .
 Ծափ գծափի 'ի յաղքանակ ,
 Քաջք ընդ քաջաց 'ի քաղաք . . .

Ի յաղքանակ :

Ոտից 'ի տրոփիւն , այերք բնդացեն ,
 Շաջիւն 'ի զինուց ազգք դաղացեն .
 Ծափ գծափի 'ի յաղքանակ ,
 Քաջք՝ ընդ քաջաց 'ի քաղաք . .

Պարգել զրօշ
 Պարսկական ,
 Յաղքանակաց
 Ի հանդես :

ՏԵՍԻԼ Թ.

ՎԱՀԱՆ (Առանձին)

(Տեսարան Էյնելով) Ի՞նչ սրտաճմիրի աղաղակներ պիտի յաջորդեն ձեր երգին : Է՛հ , այն Յունական հուրը՝ Հաստանի վրէժինդիր ոգին պիտի ըլլայ . այն թշնամի բուսմանդներն ալ՝ Հայրենեացս փրկութեան գոհերը . . Իրենց սղբերն՝ աղաղակներն ու հառաչանքներն երբէք զիս իրգութ չը պիտի կրնան չարժել : Այո , այսպէս պէտք է վարուիլ , վասն զի վայրենի իշխանութիւն մը ձեռք առած՝ չ'են ուղեր խաղաղութեան աջ կարկառել . այլ ընդ հակառակն սպառնալեօք կ'որոտան , մահ , արիւն կը գոչեն , կայծակներ կը շանթեն եւ կուզեն իրենց նամանորուն արեամբը աւերակներ ներկել , ահա այս պատճառներուն համար մեր ամեն նենդութիւններն հոս կարդարանան : Օ՛ն , գործ տեսնեաք՝ ժամանակն է : (Բերդին վրայ կ'Էյնե , ջանք բերդին միւս կողմը կը նետե , իսկոյն բոցեր կ'Էյնեն եւ բոցերուն մեջ կը տեսնուին մարդիկ՝ որք կ'աղաղակեն «Անիծեա՛լ Ելլաս , Գալլ Վահան») Խուլ է երկնից բարութիւնը ձեր անիծանաց ձայնին զէմ :

ՏԵՍԻԼ Ժ.

Յոյր չէայ գորականք՝ իշխանք՝ գորապետք ամեն կողմանե տեսարան կը բափին աղաղակելով :

ԲՈՒՈՐԸ . Կեցցէ , խորագիտութիւն Վահանայ :

ՎՀՆ. (Բերդին վրայէն) : Կեցցեն , Հայկազեան քաջերը :

29Ի ՎԱՐԱԳՈՅՐՆ

ՎԱՐԱՐՈՒՄԵ ՉՈՐՐՈՐԳ

ՏԵՍԻԼ Ա.

ՄԱՆԹԱՆԷ ԵՒ ՀԱՅԻ

ՄՆԹՆ . Ինչո՞ւ այդ շքեղ տպարանը ինձ մութ բանտ մը կ'երեւնայ . ահ , սիրտս մշտերով լցուած ամեն բան կ'արհամարհէ , նոյն իսկ Կիւրոսը՝ որուն սիրովն երջանիկ բաղդ մ'ունեցած կը համարէի . եւ ինչպէս չ'արհամարհեմ , որ զիս սիրել խոստանալէն վերջը , հիմայ նոյն սէրը անարգ գերիի մը վրայ ամիտիւմ է : Ո՛հ , սէր սէր , ինչո՞ւ արժանաւոր ընտրութիւն չ'ունիս , ինչո՞ւ շատ անգամ դահի մը բարձրութիւնէն ստրուկ գեղջուկի մը մինչև ոտքը կը խոնարհիս . . Բայց ինչ որ ուր ըսեմ վզուր է , սէրն իր լքած սիրտն կրկին իրեն օթոռ չ'ընտրէր . Կիւրոս վատ գերիէն զրուուած է եւ յուխանան ալ զիս չը պիտի սիրէ :

ՀՅԶ . Գիտեմ , իշխանուհի , զիրոյ ցաւն ու վիշտը մահ :

ուրնէ աւելի կը խռովէ մարդու սիրտն եւ ամեն տեսակ միտիթարանք կարծես աւելի կը տաղնապէն գինքը , բայց ձեզի համար այդպէս չ'է . մի հաւատար բնաւ՝ որ կիւրոս սիրով անոր յարած ըլլայ , ինձ կ'երեւի թէ անոր հետ դըօսնուլ կ'ուզէ նա :

ՄՆԹՆ . Իմ վիշտերս չտիաւորելու համար զիս միտիթարել կ'ուզէք , բայց ես աղէկ գիտեմ՝ որ ամեն բան լմնցած է . կիւրոս անոր սիրովն ապուշ մը դարձած է :

ՀՅԶ . Ձեր մէկ հրամանն բաւական է ամեն բան իր առջի ուղղութեան մէջ դնելու :

ՄՆԹՆ . Քանի որ մեր իշխանազունները՝ կին եւ աղջիկ գերբնեղը իրենց հաճոյիցը գործածելու համար ինսամօք պահելու վատ սովորութիւնն ունին , երկնային պատգամն իսկ այդ դործը չը կրնար տեսնել :

ՀՅԶ . Բայց , իշխանուհի , պարագայները փոխուելուն՝ սովորութիւններն ալ կը փոխուին :

ՄՆԹՆ . Ա՛հ , Հայդի , Հայդի , ինչ կըսէք , այս սովորութիւնն զրաւոր պայմանէ մ'աւելի ուժ ունի :

ՀՅԶ . Այդ պայմանը իզուրէ աւելի դիւրին ինչ բան կայ :

ՄՆԹՆ . Օ՛ , այդ ինչպէս կարելի է . . երբ աղջիկ մը կը յաջողի իշխանի մը սրտին իշխել , այնուհետեւ այն աղջիկը իշխանէն մեծ է :

ՀՅԶ . Փոքրիկ բաժակ մը թոյն այդ տեսակ իշխանի մը դատապարտութիւնը կրնայ կնքել . . . :

ՄՆԹՆ . Ատոր ես ալ կը ցանկամ , բայց եթէ մանրախոյզ քննութիւն մը վերջէն այդ կնիքն իւղէ . . . (Սաբեցիկն տեսնելով) ա՛հ , թշուառական գերի . ինչ՞ա կը դողամ :

ՀԱՅՁԻ . Պարապ տեղը մի՛ հառաչեր , մի՛ այդչափ յուզուիր . (առ. Սաբեցիկ) հոս եկու հոս , ցած գետբի՛ :

ՏԵՍԻԼ Բ .

ՆՈՑՆՔ ԷՆ ՍԱԹԵՆԻԿ

ՄՆԹՆ . (ինչո՞հ նախանձորդիս ներկայութիւնն զիս այսպէս տակն ու վրայ կընէ) Անամօթ , դու չես գիտեր որ ես երեք տարիէ ի վեր կիւրոսի նշանուած եմ . . . դու ինչպէս յանդգնեցար զայն գլխէ հանել . . (Սաբեցիկ կը լուէ) պատասխան տուր :

ՀՅԶ . Ինչո՞ւ չ'ես խօսիր , ցած Հայ :

ՍԹՆԿ . Ի՞նչ խօսիմ . . . զիս ի դուր տեղը մի՛ նեղէք , իմ վշտացս վրայ նոր ցաւեր մ'աւելցնէք , ես հազիւ իմ թշուառութիւններս կրնամ ողբալ :

ՄՆԹՆ . Սա լիտի գերին նայեցէք , ինչ լեզուներ կը թափէ . . . դու այդ անարգ վիճակիդ մէջ մեզ խաբել կը յանդգնիս . այս ապարանիս մէջ այսքան նաժիշաներ կան , ինչո՞ւ անոնց մէկուն վրայ այսպիսի կասկած մը չ'ես ըներ . . . Խօսէ , ինչո՞ւ պապանծեցար :

ՀՅԶ . Ի՞նչ խօսի , ինք չը գիտեր իւր յանցանքը :

ՍԹՆԿ . Պարապ տեղը մի՛ բարկանաք . հաւատացէք , ձեր գլխոյն վրայ կ'երդնոււմ . մտքէս անգամ ատանք խորհուրդ մը տնցած չ'է . . . այս գժբաղդ վիճակիս մէջ ամեն հաճաք ինձ համար մեռած են :

ՄՆԹՆ . Նայէ , նայէ , ինչպէս ծածկել կը ջանայ . հապա ես զրպարտութիւն կընեմ վրադ . . . կիւրոս մէկ

անդամ զիս տեսնելուն կեանքը կ'ուտար . այսքան կը սիրէր զիս, բայց երկու երեք ամսէ ի վեր երեսս նայելու կը սոսկայ :

ՍԹՆԿ . Այդ պատճառը զիս յանցաւոր չը կրնար դատել . . . :

ՀՅԶ . Ինչո՞ւ չը կրնար դատել, բերանս բանալ մի տար . . . ինչո՞ւ համար դուն ուր որ նստիս, Կիւրոս այն կորմերն ժուռ կ'ուզայ, ուր որ երթա՞մ միշտ այն կողմերէն չը հեռանար եւ միայն քեզ կը դիտէ :

ՍԹՆԿ . Կարելի է Կիւրոս ատանկ զիտաւորութիւն մը ունենայ. եւ զիացէք՝ որ ինձ մէկ մեծ շնորհ մ'ըրած կըլլաք եթէ այն զիտաւորութենէն զինքը ետ կեցնէք, ինչու որ իմ սիրտս ընաւ ան չը սիրեք եւ յաւիտեան ալ սիրելիք չ'ունի :

ՄՆԹՆ . Այլ բարկութիւնս չը պիտի կրնամ զսպել, սա զձու՞ծ գերին նայէ . . . եթէ այն քեզ ոիրել ուզէ, դունոր սիրտ չը պիտի տաս . սարուկ գերի, դուն քանի ստակի արժողութիւն ունիս :

ՍԹՆԿ . Գերիին եւ ազնուականին սիրտը մի եւ նոյն կաւէն շինուած է :

ՀՅԶ . Լա՛հ, յիմար գերի, չեա զիտեր՝ որ յանգզնութեանդ պատիժը ծանր է :

ՍԹՆԿ . (յուզեալ) Զարկ, մեացնէր . կեանքէ՞ս աւելի ատանկ հարուածի մը կը փափաքիմ :

ՄՆԹՆ . Այլ բաւական է յանգզնութիւնդ, որո՞ւ դէմ կանգնած ես . . . Դուն գիտցիր՝ որ Կիւրոս իմ սէրս միրժէ կամ ոչ, ես դարձեալ, արքունի զիւանսդ պրիմ՝ աղջիկն եմ :

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ Ե. ՆԷՅ (Երկու ցածրով)

ՆԷՅ . Ի՞նչ է այս որոտումը . ձայներնիդ մինչեւ հօրս սենեակը կ'ուզայ :

ՄՆԹՆ . Կը տեսնես սա թշուառական գերին, իմ մահուանս պատճառ պիտի ըլլայ . . . ան ի՞նչ կ'ըլլամ . . . օգնեցէք ինձ (մարելու պէս կ'ըլլայ ցածրաբ կ'օգնեն) :

ՆԷՅ . (առ Սաբէնիկ) Ի՞նչ կ'ուզէք սարուկ գերի, չ'էք նայիր ձեր խեղճ վիճակը :

ՍԹՆԿ . Իշխանուհի, զիս կ'ամբաստանեն թէ՛ Կիւրոսը կը սիրեմ, կ'աղաչեմ, դուք վկայեցէք այդ մասին իմ անմեղութեանս :

ՄՆԹՆ . Այլ չ'եմ գիմանար :

ՆԷՅ . Կ'երեւի՛ թէ դուն Կիւրոսը գլխէ հանել կ'ուզես :

ՍԹՆԿ . Կ'երզնում, ընաւ :

ՆԷՅ՞ . Լա՛հ, անպիտան գերի, զիս ալ վկայ կը կոչէք . . . ես կը տեսնամ՝ որ եղբայրս քանի ամիսէ ի վեր հաճոյք չ'զգար եւ գրեթէ ինքզինքը կորսնցուցածի պէս բան մ'եղած է, այս առանց պատճառի չը կրնար ըլլալ, ես հիմայ աղէկ հասկցայ որ նոյն իմ պատճառը դուն ես եղեր :

ՍԹՆԿ . Ա՛հ, ինչպէ՞ս իմ անմեղութիւնս յայտնեմ, Աստուած իմ :

Մեծ . Ա՛խ , այդ քու լեզուդ մահաբեր թոյն մ'է , ա-
նիծեալ ըլլաւ . . . անիծեալ :

ՍԹՆ . Եթէ յանցանք ունիմ . . . :

ՆԵՅ . Ալ պապանծէ . . . (տո. Մանթանէ) Մանթանէ,
բնաւ մի յուզուիր , ես այսքան իմացայ բաւական է , ես
դարձեալ կ'աշխատիմ կիրոսն համոզելու . ատոր բնաւ մի
կանկածիր , միթէ մեր ազնուական գերդաստանին պա-
տիւն կարող է ասանկ սինլքոր գերի մը աղարտել . . .
Ես պիտի ըլլամ այս լիտիին վրէժինդիրը :

Մեծ . Ձեմ գիտեր , ինչու աչքերս կը մթագնին ,
նուաղեցաւ սիրոս . . . :

ՆԵՅ . Մանթանէ , ատանկ չնչին բանի մը այդքան կա-
րեւորութիւն մի տար , ես հօրս պատուոյն վրայ կը խոտ-
տանամ , որ ամեն փափաքդ յաղեցնեմ , թող սա անարդ
գերին , եկն ինձ հետ քիչ մը հանդիստ ըրէ : (Կերքան) :

ՏԵՍԻՒ Դ .

ՍՍԹԵՆԻԿ (Ա.Ս.ԱՆՃԻՆ)

Ինչ յուսահատ վիճակ . . . հեռացած եմ Հայրենիքէս .
հեռացած եմ միակ հօրմէս , որ անոր ծերութեան նեցուկն
էի , ա՛ն հայր իմ . . . հիմայ հոս ոչ միայն պանդուխտ
այլ գերուհի մ'եմ . յոյս մը եւ սէր մ'ունէի որ այսպիսի
գժբաղդութեան դէմ իմ փափուկ սիրոս կը պաշտպանե-
ին , բայց աւանդ , անոնք ալ վերջացած են ինձ համար . . .
ալ չը պիտի կրնամ տեսնել իմ հայրս , ալ չը պիտի կըր-
նամ տեսնել նաեւ պարտիզպանը . ով Աստուած անոր

յիշտակը սիրոս սկսաւ սրտիել . . . աւանդ բաղդիս ,
անիկայ՝ որ իմ հայրական գրկէս հեռու անցուցած թըշ-
ուառ օրերուս մխիթարիչ մ'էր , այսօր իմ սիրոյս հա-
մար , իմ պատուոյս համար զո՛ն գնաց , ա՛ն նա զիս շատ
կը սիրէր , թերեւս հիմայ իր գլուխը չղթայներու վրայ
գրած , դարձեալ իմ վրայ կը մտածէ . . . : Անկարելի
է , նա զիս չը մոռնար , ինչպէս որ ես ալ զայն չը պի-
տի մոռնամ , սրտիս մէջ հակառակ մըցումներ կըլլային .
կուզէի իրեն ով ըլլալը գիտնալ , չը գիտեմ ինչ նախա-
գգացում մ'էր՝ որ զիս կը դրդէր , բայց իմ դանձիս գա-
լուստը ընդմիջեց զանի . անդգամները :

ՏԵՍԻՒ Ե .

ՆՈՅՆ ԵՆ ԿԻԻՐՈՍ

ԿՐՍ . Օրիորդ :

ՍԹՆԿ . (Կարոսն է) :

ԿՐՍ . Գեռ չէք ուզեր ինձ հետ հաշտուիլ :

ՍԹՆԿ . Ստանձնութիւնս մի խռովիր , ես դժբաղդ եմ :

ԿՐՍ . Գիտեմ պարտիզպանը միտքդ եկած է :

ՍԹՆԿ . Այո , կը սիրէի զայն , ինչու ծածկեմ , եւ որ-
չափ կենդանի եմ պիտի սիրեմ զինքը , այո , պիտի սի-
րեմ քանի որ սիրոս այս կուրծքիս տակ կը բարախէ :

ԿՐՍ . Կը հաւատամ . արդէն քեզ մտիկ կընէի . . . Է
պարտիզպանի մը , ապուշի մը սիրահարած ես . . . սի-
րահարէ անանկ մէկու մը՝ որ հարուստ է , գեղեցիկ է
եւ կրնայ քեզ երջանկայնել . . . չէս գիտեր՝ որ եթէ
այսօր խարուսիկ սիրով մը պարտիզպանը աւնես , վաղ-
ուրնէ պիտի սկսի ձեր դժբաղդութիւնը՝ որ անկարդ սի-
րոյ մը հետեւանքն է մըշտ :

ՄԹՆԿ. Սէրը դէմքի գեղեցկութեան, նիւթական հա-
րստութեան հետ յարաբերութիւն մը չունի եւ անոնց ե-
րազած երջանկութեանցը վրայ միշտ կը ծաղրէ, սէրը
սրտի խնդիր է եւ միայն ցուրտ գերեզման մը կրնայ լու-
ծել, ահա այս ներքին համոզմամբ է միայն՝ որ ձեր
անարգած պարտիզպանն ընտրած եմ. բայց անոր հետ ա-
պերջանիկ պիտի ըլլամ, ապարազդ պիտի ապրիմ, հոգ չէ.
բաւական է որ՝ սիրտս անոր սիրովը կ'սփոփի :

ԿՐՍ. Ես ալ աղէկ համոզուած եմ որ՝ օրիորդներն կոյր
եւ փոսնագաւօր սիրոյ հակամիտ են քան ճշմարիտ երջան-
կութեան, որ միայն կրնայ անոնց յուսածիծաղ ապագայ
մը պատրաստել : Է՛՛՛, աղջիկները գիտակցութիւն չ'ունին
որ օրինաւոր սկզբունք մ'ընտրելու կարող ըլլան :

ՄԹՆԿ. Դուք միշտ աղջիկները կը պարտաւէք՝ մանա-
ւանդ ինձ նմանները. բայց ես քու գիտցած օրիորդներէդ
չ'եմ՝ որ իմ սիրտս ամեն երիտասարդներու առաջ բանամ,
ամենն ալ դունաւոր սիրով սիրել սկսիմ. ինքզինքս անոնց
ամենուն հաւանցեցելու յուսով սկսիմ անոնց հաճոյից խըն-
կարկու ըլլալ . . հետեւաբար ամենուն ատելի ըլլամ . .
ես մէկու մը ծախուած եմ եւ այն ալ քու չը հաւնած
պարտիզպանդ է : (Ասանկ ըսեմ որ քերեռս յոյսն ինձմէ
վերջացնէ) :

ԿՐՍ. Անիկայ բանտին մէջ մեռաւ .
ՄԹՆԿ. Իսկ անոր յիշատակն անմահ է :
ԿՐՍ. Ատկէ ինչ օգուտ :
ՄԹՆԿ. Իւր յիշատակովը պիտի ապրիմ եւ զիտցիր՝ որ
այսուհետեւ իմ սիրտս անոր գերեզմանին նուիրեալ է :
ԿՐՍ. Պիտի մոռնան անիկայ : (Բռնել կուգէ) :
ՄԹՆԿ. Թող զիս, ալ բաւական է : (Կը փախցի) :

ՏԵՍԻԼ Զ.

ԿԻՐՈՍ (Առանձին)]]

Անմարդ գերի, առանց նայելու քու տորկութեանդ լով
սէրս կը մերժես. դողն այդ յանդղնութենէդ . . պէտք
է ուղղակի բանտն երթամ եւ սա թշուառ պարտիզպանը
սատակեմ, որ սա՛ անմիտ աղջիկին իւր յոյսն անկից վեր-
ցնէ : (Երբայու կ'ըլլայ) :

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆ, ՄԻՉՐԱՆ Էլիսանդասած, ԱՐԲԱԿ, ԴԱՐԵՉ

ՄՉՐՆ. (Ետեւեւ) Կեցի՛ր, Կիւրոս. ո՛ւր կ'երթաս :]
ԿՐՍ. (Ի՛նչ ըսելու է) Ես ալ ձեզ կուգայի :
ՄՉՐՆ. Ա՛հ, զաւակս, այսօր վիճակս շատ դէշ է . .
չ'եմ կրնար ոտքի վրայ կենալ : (Կը նստի) :
ԿՐՍ. Բժիշկին ապահովուցած է զիս ձեր վիճակին վրայ :
ԱՐԲԿ. Կը յուսամ որ քանի օրէն կատարեալ առողջու-
թիւն դո՛ւնաք :]
ԴԱՐՉ. Տէր իմ, բժիշկը փորձառու անձ մ'է. նա ձեր
հիւանդութիւնը ոչինչ կը համարի. եւ դեղերն ինձ յանձ-
նելուն պատուիրեց որ բնաւ անհանդիստ չ'ըլլաք :
ՄՉՐՆ. Ա՛հ, այս դեղերն ալ խիստ անաանելի են. ա-
ղէկ է մարդս մեռնի՛ քան այս դեղերը խմէ : (Կը հազայ) :
ԿՐՍ. Ի՛նչու ցնորեալի մը նման կը խօսիք, հայր :
ՄՉՐՆ. Տղմս, դո՛ս չ'եմ վիճակէս : (Կը մտածէ) :

- ԿՐՍ . Հայր իմ , դարձեալ ինչ կը մտածէք :
- ԳՐՀ . Տէր իմ , երբէք մտածելու չ'էք :
- ԱՐԲԿ . Բժիշկը խիստ պատուէր ըրած է :
- ՄՀՐՆ . Բայց ինչպէս չը մտածեմ . ես այսպէս հիւանդ , Վահանէն ալ տակաւին տեղեկութիւն մը չ'առի : Ես կ'ուզեմ որ չը մտածեմ , բայց կարծեմ թէ աւելի կը տանջուիմ , մանաւանդ Վահանէն լուր չ'առնելու աւելի զիս կը տանջէ :
- ԱՐԲԿ . (Յիշողութիւնը կորսցուցած ե՞) Զքէր յիշե՛ր՝ որ երէկ Վահանէն պատգամաւոր ընդունեցիք :
- ՄՀՐՆ . Այդ կը յիշեմ , բայց Վահան դեռ չ'երեւցաւ :]
- ԱՐԲԿ . Ես կը յուսամ որ՝ վաղն այն ալ կուգայ :
- ՄՀՐՆ . Վա՛ղը . ա՛հ , ամէն մէկ վայրկեանները մտքիս մէջ դարեր եղած են եւ աւելի զիս կը տանջեն :
- ԿՐՍ . Դուն հող մ'ընե՛ր , հիմայ շուտ մէկը կը գրկե՛ք :
- ԳՐՀ . Ես պատրաստ եմ երթալու :
- ՄՀՐՆ . Քեզ տեսնեմ , Գարեհ , դուն ալ հոն չըմնաս :
- ԳՐՀ . Շատ շուտ պիտի վերադառնամ : (Երբայտ կըլլայ)

ՏԵՍԻԼ Ը .

[ՆՈՅՆՔ ԷՆ ՊԱՆՍԱԿԱՆ ՄԸ]

- ՊԼՏԿՆ . (Շնքապառ .) Վահան մեծ հանդիսով կուգայ :
- ԳՐՀ . (Ի՛նչ , ունայն աշխատութեան մը ազատեցանք) :
- ՄՀՐՆ . (Հոգի առած) Ի՛նչ կ'ըսես , ո՛ր է :
- ՊԼՏԿՆ . Հիմայ կը ներկայանայ ձեր մեծութեան :
- ՄՀՐՆ . Մուշեղը հեան է : (Միւսներն գաղտ կըխօսին)
- ՊԼՏԿՆ . Մուշեղը չ'եմ ճանչնար :

- ՄՀՐՆ . Շղթայակապ մը կանց իր հետը :
- ՊԼՏԿՆ . Բաշադրութիւն չըկրցի ընել :
- ՄՀՐՆ . Եղբայրս ալ չը տեսար :
- ՊԼՏԿՆ . Մէկն անոր նմանցուցի , կարծեմ հեան է :
- ՄՀՐՆ . (Կարծես ոգեւորեցայ) Արբակ , Գարեհ , կողմանէ դիմաւորեցէք զինքը եւ յարգանքներ կեղծեցէք :
- ԱՐԲԿ . Շատ աղէկ :
- ԳՐՀ . Գլխուս վրայ : (Կերբան) :
- ՄՀՐՆ . Կիւրոս , դու ալ գնա :
- ԿՐՍ . Մեծ յոյս ունիմ որ պիտի յաջողինք : (Կ'երբայ) :

ՏԵՍԻԼ Թ .

ՄԻՀՐԱՆ (Առանձին)

Վաղուց խորձուած բան մ'է թէ Հայերն օտարասէր են . բայց եւ այնպէս բոլորովին վատահելու չ'է այս Աղբին . . տես Վահանն ինձմէ՛ ակնկալութիւն ունենալուն համար , Մուշեղ իւր բարերարն՝ որ զայն Տարօնոյ երկրին իշխան կարգած է՝ ամեն ճիգ կը թափէ իմ ձեռքս մատնելու . կը հետեւի որ' եթէ պատեհ ժամ մը գտնայ , մի եւ նոյն վատութիւնն ինձ ալ կ'ընէ . բայց ես շատ շուտ չ'եմ խարուիր , իմ մտքիս մէջ հաստատ որոշած եմ՝ որ եթէ հիմայ Մուշեղն հետը բերած ըլլայ , անոնց երկուքին զուլարն մի եւ նոյն դահճին ձգել պիտի տամ . է , լուհար :

ՏԵՍԻԼ Ժ .

ՆՈՅՆ , ՎԱՀԱՆ ԷՆ ԱՅԼՔՆ

- ՎՀՆ . (Գոյնը նետած է) :
- ՄՀՐՆ . Ա՛հ , Վահան . (Ձեռքը կըսեղմէ՛ երեսը կընամ .)

Վ.Հ.Ն. Տէր իմ, ինչ է այս վիճակնիդ . ցաւ մ'ունենա-
լու էք . (Դեղերը տեսնելով) այս դեղերը . .

ՄԲՆ. Շատ դէշ ջղային տկարութիւնս մ'ունիմ . հիմայ
քեզ տեսայ որ քիչ մ'ողեւորեցայ : (Կրնազայ) :

Վ.Հ.Ն. Տէր իշխանս, դուք հիմայ պէտք է բոլորովին ու-
րախ ըլլաք . ամբողջ Հայաստան գրեթէ նուաճեալ է եւ
ձեր օրէնքներն ու հրամաններն սկսած են հոն իշխել . .
այս արտաքոյ կարգի յաջողութիւնները պարտք կը դնեն
վրաս որ մեծ ինճոյք մը պատրաստեմ Պարսից բոլոր մեծ
պաշտօնակալներուն եւ այնպէս կատարենք ներկայ յազ-
թանակին հանդէսը :

ԱԲԿ. (Ի՛նչ գարմանայի հայ մ'ե) :

ՄԲՆ. Այդ հացկերոյթին պարտքը՝ ձեր հաւատարիմ ծա-
ռայութիւնները մեր վրայ կը դնեն . դուք մեր սիրոյն հա-
մարձեր Ազգին ատելի եղաք . Պարսկական գահին պատի-
ւը բարձրացնելու համար՝ վրանդներու եւ մահուան հետ
կռուեցաք , եւ այն հինցած վրէժն՝ որ մեր անթիւ բա-
նակաց արեամբը պիտի լուծուէր , դուք առանց արիւն
թափելու յաջողեցաք . . . (Մաղեղին խօսքը ջը բանար) :

Վ.Հ.Ն. Տէր իշխանս : վրէժ մը դուք կուզէիք առնել Մու-
շեղէն , վրէժ մ'ալ ես . . . ձեզի համար յաղթութիւնը
ա՛մեն ժամանակ պատրաստ էր , բայց եթէ ձեր օգնու-
թիւնն ու հրամանն չը քաջալերէին Վահանին բազումին,
Վահան մինչեւ գերեզմանս յուսահատ պիտի լիջնար . .
անս , այս է իմ համոզումս . . . Կ'ազաչեմ , իշխանս , մի
վիրաւորէք իմ զիւրազացութիւնս , եւ թողէք՝ որ ու-
րախութենէ առաջ եկած զխաւորութիւնս 'ի գործ
դնեմ :

ՄՀԲՆ. Ուրեմն հրաման է ձեզ . իրեւ փոխանորդ Մի-
րանայ ինչ որ կուզէք կատարեցէք . . թէեւ ես անձ-
նական տկարութեանս պատճառաւ չը պիտի կրնամ ներ-
կայ գտնուիլ , բայց այն պահանս թող Կիւրոսն լեցնէ :

Վ.Հ.Ն. Շնորհ ունիմ իշխանս , շատ աղէկ :

ԿՄ. Երբ պիտի պատրաստէք :

Վ.Հ.Ն. Մասնաւոր գրով մը աղգարարութիւն կընենք :

ԳՐԶ. Մենք ալ բաժին ունինք :

Վ.Հ.Ն. Ի՞նչ ըսել է . . Ձեր ներկայութիւնը՝ փառք մ'է
հանդէսին :

ԱԲԿ. Մենք ալ պիտի վայելենք այդ ուրախութիւնը :

Վ.Հ.Ն. Եթէ հաճէք շնորհապարտ պիտի կացուցանէք :
(Չը գիտեր որ հանդէսը իրեն մահաբնէն վերջը պի-
տի կատարուի) :

ՄՀԲՆ. (Այլ համբերութիւնս հատաւ .) Բայց Մուշեղին
կամ եղբօրս վրայ բան մը չը յայտնեցիք :

Վ.Հ.Ն. Ատոնց վրայ առանձին խօսելիք ունիմ :

ՄՀԲՆ. (Իրենցերուն) Դուրս ելէք :

ԳԵԶ. Շատ աղէկ :

ԱԲԿ. Գլխուս վրայ : (Կ'երբան) :

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՄԻՀՐԱՆ , ՎԱՀԱՆ , ԳԱՐԵԳԻՆ , ՆԵՐՍԷՍ , ՎԱՀԷ]

ՄՀԲՆ. (Վահանիցերուն) Դուք ալ դուրս ելէք :

Վ.Հ.Ն. Հող չէ թող մնան , արդէն եղած գործերուն
տեղեակ են :

ՄՐՆ. Անհամբերութեամբ վախնամ ձախորդ դէպք մը պատահեցաւ :

Վ.Հ.Ն. Այդ մասին երբէք մի կասկածիք . . եղբայրդ կապանքներէ արձակեալ է եւ հիմայ անոր շղթայներն Մուշեղին պարանոցէն կախուած են :

ՄՐՆ. Բայց ուր են հիմայ :

Վ.Հ.Ն. Երկուքն ալ Ողկան ամուրին մէջ :

ՄՐՆ. Ինչո՞ւ մէկտեղ չը բերիք : (Կը կասկածիմ)

Վ.Հ.Ն. Տէր իմ , ամեն բան խոհեմութեամբ կատարելու է . . : Մենք այն ամուրը ու անոր չըջակայսերը նուաճելէ վերջը , Պարսիկ զօրքերը իրենց հրամանատարներուն խրատներուն հետեւելով ինձ դէմ ապստամբութեան ցոյցեր կընեն , չեմ գիտեր ինչ գաղտնի նպատակաւ , ուրիշ կողմանէ Հայոց կատաղի զայրոյթն զրդուած է . . . : Այսպիսի ծանրակշիռ պարագայի մը մէջ չէի կրնար համարձակիլ այդ հրամանդ 'ի գործ դնել :

ՄՐՆ. Ուրեմն ինչ պէտք է ընել հիմայ :

Վ.Հ.Ն. Վտտահ էք իմ վրաս :

ՄՐՆ. Ամեն կերպիւ :

Վ.Հ.Ն. Գուր զուր պահպանեցէք : (Իրեններուն կաճաց) քնաւ մարդ ներս չը ձգէք : (Կերբան) :

ՏԵՍԻԼ ԺԲ.

Վ.Ա.Հ.Ա.Ն. , ՄԻ.ՀՐԱՆ

ՄՐՆ. Ինչ որ ուղէք պիտի կատարեմ :

Վ.Հ.Ն. Հիմայ կը հաւատամք ինձ ձեր անձնական մտտանին :

ՄՐՆ. Ի՞նչ պիտի ընէք :

Վ.Հ.Ն. Գուր լոկ հանդիսատես մ'եղիք . . բաւ է որ հաճիք :

ՄՐՆ. Հողիս անգամ ձեզմէ չեմ խնայեր :

Վ.Հ.Ն. Ուրեմն ինձ տուէք : (Յաջողեցանք) :

ՄՐՆ. Ահաւասիկ : (Կուտայ) :

Վ.Հ.Ն. (Առնելով) Ձեր լիազօր իշխանութիւնը շնորհեցիք ինձ այս վայրկեանէս : (Քղանցքին տակը բան մը կը բնտռէ) :

ՄՐՆ. Սրտի հաճութեամբ :

Վ.Հ.Ն. Հայաստան Պարսից իշխանութեան տակ , Մուշեղն ալ ձեր առաջ շղթայակապ . . . ատոնք չեն ձեր ուզածները :

ՄՐՆ. Ուրիշ բան չեմ ցանկար . . . բայց եղբօրս ազատութիւնն ալ կուզեմ : (Վահան դաշոյնը կը պատրաստէ քղանցքին տակը) :

Վ.Հ.Ն. Ես ալ կը ցանկամ որ դու ալ եղբօրդ նման Հայաստանին գոհ ըլլաս : (Կը գարնէ) :

ՄՐՆ. Ա՛հ , (Կիցայ կը մեռնի) :

Վ.Հ.Ն. Հայաստան , ալ երջանիկ ես :

ԶԳԻ Վ.ԱՐԱԳՈՅՐՆ



ՏԵՍԻՆ ԺԳ.

(Վանան Միհրանին դիակը անկողնոյ մէջ պատկե-
ցունէյ կուտայ 'ի բուն ճեւացնէյու. համար,
ինքն գրասեղանին բովը նստած՝ Միհրանին
կնիքն ալ գրասեղանին վրայ է)

Վ.Ա.Հ.Ա.Ն , Գ.Ա.Ր.Ե.Գ.Ի.Ն , ՆԵՐՍԷՍ

Վ.Հ.Ն. (Միհրանին գրասեղանն բացած՝ անոր մէջի
գրուածները աչքի անցնելով) Մեղի նպատաւոր գը-
րութիւն մը չը կայ ասոնց մէջ :

ՆԵՐ. (Միհրանին դիակն ցուցնելով) Տէր իշխան, տես,
ինչպէս է , յայտնի է . . .

Վ.Հ.Ն. Շատ ասդին դարձած է , տեսնողը կը կասկա-
ծի. Գարեգին, գլուխն քիչ մ'ալ որմին կողմը դարձուր :
ԳՐԳՆ. (Դարձնելով) Ի՞նչպէս է , աղէկ է :

Վ.Հ.Ն. Բաւական է ձգէ . . . Հիմայ պէտք չէ ժամա-
նակ կորսնցնենք . բայց կարծեմ Վահէն դուռը կը պահ-
պանէ . . .

ԳՐԳՆ. Քիչ մը առաջ դուք այդպէս հրամայեցիք :

Վ.Հ.Ն. Այո , ես պատուիրեցի . . . Է՛հ ասանկ վտանգա-
ւոր զբաղմունքներն մարդը կը շուարեցնեն . ինչ եւ իցէ ,
հիմայ դուն, Գարեգին , շուտով գնա Արբալին ու Գարեհը
ինձի կանչէ : (Երբայու կըլլայ) բայց ինձ նայէ . . . Վ.ա-

հէին խտփու պատուիրէ՝ որ Միհրանայ 'ի քունը ըլլաին
պատճառելով , ամենեւին ուրիշ մարդ մը մինչեւ իսկ
կիրորը ներս չը թողու :

ԳՐԳՆ. Շատ աղէկ : (Կերբայ) :

ՏԵՍԻՆ ԺԳ.

Վ.Ա.Հ.Ա.Ն , ՆԵՐՍԷՍ

ՆԵՐ. Մեղի ալ հրաման մը ունիք :

Վ.Հ.Ն. Այո , դուն ալ սխաի երթաս օրինաւոր հացկե-
րոյթ մը պատրաստել տալու , աշխատէ՝ որ ամենեւին
պակասութիւն մը չըլլայ . . . Նաեւ Վաղինակը կանչել
տալով մասնաւոր հրաւիրատուներ գրել տուր , թէ Վիւ-
րոսի եւ թէ Ըոլոր մեծամեծաց :

ՆԵՐ. Ուրիշ ըսելիք ալ ունիք :

Վ.Հ.Ն. Ուրիշ պէտք ըլլալիք հրահանգներն Գարեգինին
կուտամ , դու միայն այս իմ պատուէրներս 'ի գործ դիր
(Երբայու կըլլայ) Հա , մոռցայ ըսել . . . առատ զինի ,
առատ օղի պատրաստել տուր . ասոնք պէտք են :

ՆԵՐ. Այդպէս է :

Վ.Հ.Ն. Է ուրեմն , շուտով ամեն բան ըստ օրինի կա-
տարէք :

ՆԵՐ. Այդ ծառայութիւնը ինձ թող : (Կերբայ)

ՏԵՍԻՆ ԺԵ.

Վ.Ա.Հ.Ա.Ն (Առանձին)

Մարդ մը մինչեւ որ իւր հայրենիքը օտար յարձա-

կումներէ չը պաշտպանէ , մինչև որ անկախ վիճակի մը մէջ չը դնէ անոր բաղդը , ինքը աղատ չը կրնար ասորիլ , ինչու որ մարդու մը ազատութեան սահմանը հայրենիքն է . . : Հայրենեաց քարը , հողը , հայրենասէրին կուրծքն , սիրտն է . . : Իմ համողումն՝ իմ հաւատքս այս է . . : Երբ բռնաւոր ոտք մը իմ հայրենեացս հողին վրայ կօխել կուզէ քաղաքական նպատակաւ մը՝ իմ սրտիս արիւնը կը պղծէ . . ասանկ վտանգաւոր պարագայներու մէջ համբերել չըլլար . ահա ասանկ բանաւոր պատճառի մը համար պարտաւորած եմ այս արեան նախօժիր ներն գործել : Բայց ոտքի ձայն կը լսեմ , կարծեմ կուգան :

ՏԵՍԻԼ ԺԶ.

ՎԱՀԱՆ ԵՒ ՎԱՀԷ

- ՎՆ . Վահէ , ինչ կայ , շուտ ըսէ :
- ՎՀԷ . Մեծամեծները Միհրանայ հիւանդութիւնը լսելուով այցելութեան հրամանի կսպասեն :
- ՎՆ . Ժամանակը հիմնց դասն . կ'ըսես իրենց իմ կողմանէ թէ Միհրան քնացած է , ինքն ալ խիստ կարեւոր զբաղմունքի մէջ ըլլալուն՝ առ այժմ՝ չպիտի կրնայ ընդունիլ զիրենք . գնա շուտ :
- ՎՀԷ . Շատ աղէկ : (Կ'երթայ) :

ՏԵՍԻԼ ԺԷ.

ՎԱՀԱՆ (Առանձին)

Առանկ նեղ պարագայներու մէջ կարծեա որ՝ այս տեսակ

արդեւքները բնական են . (Գարեգիներ տեսնելով) *ինչո՞ւ մինակ կուգայ . չըլլայ թէ գործը յայտնուի :*

ՏԵՍԻԼ ԺԸ.

ՎԱՀԱՆ ԵՒ ԳԱՐԵԳԻՆ

- ՎՆ . Ո՛ւր են , ինչո՞ւ չ'եկան :
- ԳՐԳՆ . Հիմա :
- ՎՆ . Ըսէ՛ք որ շուտ գային :
- ԳՐԳՆ . Ըսի . . ահա իրենք ալ :

ՏԵՍԻԼ ԺԹ.

ՆՈՅՆՔ , ԱՐԱԿ , ԳԱՐԵՀ

- ԱՐԿ . (Միհրանն անկողնոյ մեջ տեսնելով) Օ՛ , քու նը տարած է :
- ՎՆ . Կամաց խօսեցէք , քունը չը խռովի :
- ԴՐՀ . Կը յուսամ որ այդ քունով առողջանայ :
- ՎՆ . Հնարկաւ : (Աստուած խեղք տայ) :
- ԱՐԿ . Ի՛չխան , մեզ ինչ բանի համար ուզած էք :
- ՎՆ . Քիչ մը կամաց խօսինք որ անհանդիստ չըլլայ . իշխանն օգտիտիութեան համար՝ կութ լեռը վրան մը զարնելով հոն պիտի բնակի ժամանակ մը . ուստի դուն հիմայ անոր բերնէն Վարչիր Պարսից հրամանատարին նսմակ մը գրես որ իր բանակովը տեսութեան գայ հոն :
- ԱՐԿ . Իրեն հաճութիւնն առած էք :

Վ.Ն. Ի՞նչ կ'ըսէք . . . ահա իր մատանին :

Ա.ԲԿ. Աղէկ . (Կը՛գրե) ժամանակ որոշելու է :

Վ.Ն. Մի քանի շաբաթէն . . . այս ալ յիշէ որ իր բանակը իերան ստորոտի դաշար թողու , որպէս զի ոչ Միհրան նեղութիւն կըրէ եւ ոչ Վարչիբի բանակը :

Ա.ԲԿ. Ահաւասիկ զբուեցաւ . . . ուրիշ բան մ'ալ կ'այ գրուելու :

Վ.Ն. Ո՛չ , ստորագրութիւն գրէք :

Ա.ԲԿ. Միհրան Սպարապետ (ըսելով կ'ստորագրե) . ահաւասիկ :

Վ.Ն. Սա կ'սխալեմ ալ զանի :

Ա.ԲԿ. (կը գարնե) Այս ալ եղաւ :

Վ.Ն. Տուէք ինձ . (կը գոցե , կը գմռե) Դարեհ , ապիկայ ձեզ կը յանձնեմ :

ԴԻՀ. Իշխան , չ'էք յիշեր՝ որ զիս ճաշի հրաւիրած էք : (քմծիծալ)

Վ.Ն. Աղէկ միտքս ձգեցիր . . . ուրեմն ուրիշի մը ձեռքով զրկես , բայց աշխատելու ես՝ որ ձեռքը անցնի . . . ես ալ վաղը երեկոյ ձեզի կ'սպասեմ : (Այն ճաշն ձեզի վերջին ճաշ մը պիտի ըլլայ)

ԴԻՀ. Կատակ մ'էր , եթէ կը հրամայէք անձամբ ես տանիմ :

Վ.Ն. Ձէ , չէ , իմ խնջոյիցս մէջ ձեր ներկայութիւնը անհրաժեշտ պէտք ունի . . . իրաւ որ իմ ուշադրութեան նէս բողբոլլին վրիպած էր . . . ներողամիտ եղի՛ք :

ԴԻՀ. Ներողութեան բան մը չկայ , շնորհակալ եմ : (Կերբայ) :

ՏԵՍԻԼ Ի.

Վ.Ա.Հ.Ա.Ն. , Գ.Ա.Բ.Գ.Ի.Ն. , Ա.Բ.Ա.Կ.

Վ.Ն. (Ա.Ռ. Գարեգին) Դու ալ դուռը պահպանէ : (Գարեգին կերբայ) :

Ա.ԲԿ. (Խեղճը չը գիտեր՝ քե՛ Պարսկաստանի մատուցած այս ծառայութիւնները իր կորուստը կը սանձաւենն) :

Վ.Ն. (Հիմայ կարգը եկաւ ասոր) : (Դաշոյնը կը պատրաստե) :

Ա.ԲԿ. Բայց կարծես՝ թէ իշխանը շունչ չառնէր :

Վ.Ն. (Պաղարեանը) Հիւանդութիւնը կըր ծերութեան վրայ կ'ազդէ՝ շունչը կը սկարայնէ :

Ա.ԲԿ. Բողբոլլին շունչը սպառած կը տեսնեմ ասոր վրայ :

Վ.Ն. Կամաց խօսէ , հիմայ քունը անհանդիստ պիտի ընես . . . չես տեսնար անան շարժեցաւ :

Ա.ԲԿ. Ես կըսեմ՝ թէ ասիկայ մտած է :

Վ.Ն. Ուրեմն , դու ալ անոր ետեւէն մեռիր : (Դաշոյնը կողը կը միտ) :

Ա.ԲԿ. Վստ խորամանկ , ան : (կը մեռնի) :

Վ.Ն. Գհն , երկնից մէջ իրեն պաշտօնակալը եղիր :

ԱՐԱՐՈՒԱՅ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԽՆՁՈՅՔ

(Մեկ կողմէն Վաղինակ նամակներն գրած կ'սկսի ծայրէջ, միւս կողմանէ Շաւարշ [ե. սպասաւորք սեղանը կը պատրաստեն])

ՏԵՍԻՒ Ա.

ՎԱՂԻՆԱԿ, ՇԱՒԱՐՇ, Ե. ՍՊԱՍԱՌՈՐԴ

ՎՂՆԿ. (Ինքնին) ԷճՖ, հաղիւ աղատեցայ . . . այս որչափ դիր, աչուրներս շրացաւ : (Նամակներն կը փակէ) . . . (Առ սպասաւորս) Օ՛, սեղանը պատրաստէր էք : (Քովերնին երթալով) Շաւարշ, սա գինիէն մէկ հատ մը տուր . . . Շիտակը շատ յողնեցայ : (Կառնէ գինին) :

ՇՐՇ. Է՛ դուք նստած տեղերնիդ թեթեւ աշխատանքով մը օրերնիդ կ'անցնէք եւ կը դժկամակիք, հապա մեք որ ոչ պակեկելու ժամանակնիս դիտենք ոչ ճաշելու, քանի է որ՝ ողջ ողջ գերեզման մանկու ենք :

ՎՂՆԿ. (Գաւաթը բերնէն վար առնելով) Է՛հ . . . մարդուն երակներուն մէջ կարծես գօրութիւն կը չնչնէ :

ՇՐՇ. (Աշխարհ ասանկէ. սպասաւորաց խօսքին կաբեորութիւն չը արուիր) :

ՎՂՆԿ. Այս ազնիւ գինին պիտի խմեն . է է է . սա Գայլ Վահանին քաղաքակաճութեան մարդ խեղք չը կըր-

նար հասցնել, ով գիտէ այս հացկերոյթը որչափ սուղի պիտի նստի հրաւիրեալներուն վրայ :

ՏԵՍԻՒ Բ.

ՆՈՅՆՔ ՆԵՐՍԷՍ

(Սպասաւորք շարունակ սեղանը կը պատրաստեն)

ՆԵՐ. (Արտորալով) Նամակները պատրաստ են :

ՎՂՆԿ. Շատո՞նց ըմբոս է, ահաւասիկ :

ՆԵՐ. Շատ աղէկ : (Սպասաւորներուն) Մէկերնիդ եւ կէք : (Հասցեն կարդալով) Այս նամակը Կիւրոսինն է, պէտք է անձամբ տանիմ . . . այս նամակը հրամանատարինն է, ասիկայ մեծ իշխանին, վերջապէս իւրաքանչիւրը իւր հասցէին յանձնեցէք, բայց շուտով : (Կերթալ)

ՏԵՍԻՒ Գ.

ՎԱՂԻՆԱԿ, ՆԵՐՍԷՍ, ՇԱՒԱՐՇ, ՍՊԱՍԱՌՈՐԴ

ՎՂՆԿ. (Աստուած վերջը բարին ընէ) :

ՆԵՐ. (Սպասաւորներուն քովը երթալով) Շաւարշ դուք միչ քիչ, պակասութիւն մ'ունիք :

ՇՐՇ. Ամեն բան պատրաստ է .

ՆԵՐ. Ըսած գինիէս առած էք :

ՇՐՇ. Գինին ալ առինք, օղին ալ :

Ներ. Առատ ըլլար :
 ՇՐՇ. Ամբողջ Պարսկաստան կրնայ գլխովցնել :
 Ներ. Շատ աղէկ . բայց ձեզի պատուէր մ'ալ ունիմ :
 ՇՐՇ. Հրամայեցէք , տէր իմ :
 Վ. Ղ. Նկ. Բայց նախ իմ պատուէրս տուր :
 Ներ . Քիչ մը համբերէ . . . Շաւարշ , աչարուրջ կերպիւ ձեր ընդունելութիւնն ըրէք հրաւիրեալներուն . . . աշխատեցէք՝ որ պակասութիւն մը չ'ըլլայ , նաեւ ամենուն կամքին համաձայն վարուելու համար մեծ զգուշութիւն ըրէք՝ որ չ'ըլլայ թէ վշտանան :
 ՇՐՇ . Ատոնք մեր պարտաւորութիւններն են :

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆԲ ԵՒ ԳԱՐԵԳԻՆ

ԳՐԳՆ . Դեռ հոս էք . . . նամակները չ'էք տարած :]
 Ներ . Ղրկած եմ , մինակ կիւրոսինը իմ քովս է :
 ԳՐԳՆ . Ժամանակ մ'անցնէք :
 Ներ . Վաղինակ քեզի հետ պիտի տանինք , երթանք (կ'երթան) .

ՏԵՍԻԼ Ե.

ԳԱՐԵԳԻՆ . ՇԱԽԱՐՇ . (Սպասաորք)

ԳՐԳՆ . Շաւարշ :]
 ՇՐՇ . Հրամայեցէք իշխան :
 ԳՐԳՆ . Աողին եկուր , քեզի առանձին խօսելիք ունիմ :
 ՇՐՇ . Ըսէք :

ԳՐԳՆ . (Յած) Երբ սեղանը կարգի դրուի , մեր սպասաւորներուն բոլորն ալ դուրս հանէք :
 ՇՐՇ . Վերջը :
 ԳՐԳՆ . Մինակ հրաւիրեալները պիտի գանուին հոս :
 ՇՐՇ . Ի՛նչ կայ որ :
 ԳՐԳՆ . Աւելի բան մի հարցներ :
 ՇՐՇ . Ըսել է որ մինակ ես պիտի մնամ անոնց քով :
 ԳՐԳՆ . Չ'է . սպասաւորները դուրս հանելուդ՝ դուն ալ անմիջապէս դուրս պիտի ելնես :
 ՇՐՇ . Եթէ կ'ուզէք՝ հիմակունքէ դուրս ելնենք :
 ԳՐԳՆ . Չ'է . թող հրաւիրեալները գան , բաւական ծառայեցէք մինչեւ կէս մը կշտանան :
 ՇՐՇ . Ուրեմն դիւ սպասաւորաց ներկայացուր :
 ԳՐԳՆ . Աղէկ կ'ըլլայ . (Առ սպասաւորս) ինչ որ Շաւարշ ըսէ՝ կատարէք : (Հանութեան ցոյցեր կ'ընեն) :

ՏԵՍԻԼ Զ.

ՎԱՀԱՆ , ՇԱԽԱՐՇ , ԳԱՐԵԳԻՆ , ԾԱՌԱՅՔ

ՎՀՆ . Վաղինակ ու Ներսէսը չ'են երեւիր , ինչ ըրին :
 ԳՐԳՆ . Նամակները չատոնց տարած են :
 ՎՀՆ . Ուրեմն հրաւիրելոց դալը մօտեցած է :
 ԳՐԳՆ . Ատոր տարակոյս չկայ :
 ՎՀՆ . (Յած) Ուրեմն դու ինչ ըրիր ըսածս :
 ԳՐԳՆ . Շաւարշին հաղորդած եմ :
 ՎՀՆ . Միւս գործը :
 ԳՐԳՆ . Յունական հմարը :

Վ.Հ.Ն. Այս , ամենէն աւելի այդ պէտք է մեզի :
 ԳՐԳՆ. Եկո ըսեմ : (Ականջէն վար կըփսփսայ) :
 Վ.Հ.Ն. (Առաստաղն 'ուշադրութեամբ դիտելով) Աղէկ ,
 բայց դուք ալ ներկայ դասուէցէք՝ որ պակասութիւն մը
 չ'ըլլայ . . . ամեն բան պատրաստ ընելէդ վերջը . . .
 դաս կեղծիքով մը զիս դուրս կանչես :
 ԳՐԳՆ. Հարկաւ ատանկ պիտի ըլլայ : (կերբայ)

ՏԵՍԻԼ Է.

Վ.Ա.ՀԱՆ , ՇԱԻԱՐՇ , (Սպասարոյր) :

Վ.Հ.Ն. Շաւարշ , աղէկ աշխատէ , (քմծիծաղ) Միհրանայ
 պալատականներն զքեզ պիտի վարձատրեն :
 ՇՐՇ. Անոնց վարձքը ինձ պէտք չ'է :
 Վ.Հ.Ն. Գուն կարօտ մէկն ես , ինչ ըսել է :
 ՇՐՇ. Ես կարօտ եմ . . . բայց այն պարզեաները՝ որ
 անմեղներու արեամբն տողորուած է , չ'եմ ընդունիր :
 Վ.Հ.Ն. (ուռնաձայն) Ով պիտի ըլլան ասոնք :

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՅՆՔ , ՆԵՐՍԵՍ ԵՆ ՎԱՂԻՆԱԿ :

ՆԵՐ. Մենք ենք :
 Վ.Հ.Ն. Հրախրեալները :
 ՎՂՆԿ. Անոնք ալ կ'ուզան հիմայ :
 Վ.Հ.Ն. Ուրեմն այս գործը լինցածի պէս է . Վաղինակ ,
 Մուշեղն կասկածոտ մէկն է , ուստի քեզ չուտով համայ
 պիտի զրկեմ , որ իմ կողմանէ իմացես՝ թէ ամեն մեր

բունած քաղաքականութեանը մէջ յաջողեցանք . . . : Նա
 ալ յիշես՝ որ ուրիշ նպատակի մը համար կու՞թ լեռը պի-
 տի կրթամ մօտերս :

ՎՂՆԿ. Շատ աղէկ :
 Վ.Հ.Ն. Ներսէս , քեզի ալ ծանր պաշտօններ պիտի յանձ-
 նես :

ՆԵՐ. Հոգ չ'է :
 Վ.Հ.Ն. Գիտիմքերը կորսնցուր , բայց աշխատելու ես՝ որ
 Պարսկաստանէն գաղտնի մնայ . Միհրանին Արքակին եւ
 կեղծ Որմզղին հանդերձներն քեզի հետ մէկտեղ առնես-
 անոնք շատ պէտք են :

ՆԵՐ. Ատոնք մեծ ծառայութիւն մը չ'են :
 Վ.Հ.Ն. Մինակ ատոնք չ'են հրամաններս . . . : Ասոնք
 կատարելէդ վերջը , մեր հրամանատարներուն երթաւ պատ-
 ուիրեա՝ որ իրենց բանակներն առնելով կու՞թ լեռան ըս-
 տորտաի դաշտը դարանին , հոն Վարչիբին բանակը պի-
 տի գայ . . . Պէտք է՝ որ գիշեր ատեն անոնց գործն հոն
 լինցեսն :

ՆԵՐ. Ուրեմն երթանք :
 Վ.Հ.Ն. Ձէ , քիչ մը սպասեք . . . հրախրեալները զի-
 մաւորենք , եւ պէտք եղած յարգանքն մէկտեղ տանք :
 ՎՂՆԿ. Խնջալէս որ կը հաճիք : (Ոտնաձայն)
 Վ.Հ.Ն. Անոնք են :

ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՅՆՔ , (Հրախրեալք ԵՆ Սպասարոյր)
 ԿՐՄ. (Ո՞րջալի տղեկ բան է իշխանութիւնը) Վա-
 ան , այդ ընդունելութեամբն մեզ կամչընէք :

Վ.Հ.Ն. Այդ չ'եմ ընդունիր. ասիկայ բարեկամական ցոյց մ'է . . . հրամայեցէք . . . Շաւարշ , ամբողջն շտկեցէք : (Պալատականներուն) Դուք ալ վեր հրամայեցէք , կարդաւ նստեցէք :

ԿՐՍ. (նստելով) Բայց ձեզի տեղ չը մնաց :

Վ.Հ.Ն. Հոգ չ'է, դուք հանդիստ ըրէք :

ԿՐՍ. Ձեր իշխաններն ինչո՞ւ ոտքի վրայ կայնած են :

Վ.Հ.Ն. Դուք ձեր ուրախութիւնը նայեցէք , անոնք ալ կը նստին . . . նստեցէք :

ԿՐՍ. Է՛ , ես սկսայ ուտել : (Կ'սկսին ուտել)

Վ.Հ.Ն. (գիւնի լեցնելով) Շիտակը գիւնիս համար կըրնամ պարծենալ :

ԿՐՍ. Ուրեմն մէջմէկ հատ խմէ՛ք :

Վ.Հ.Ն. Հրամայեցէք , (կուտայ) Շաւարշ , աղէկ ուշադրութիւն ըրէք : (միւսները գաղտնի կը խօսակցին)

ԿՐՍ. Ես չիտակը այս բաժակը Հայաստանին նոր Մարդպանին կենացը պիտի առաջարկեմ :

Վ.Հ.Ն. Չ'եմ ընդունիր , ինձ հետ զուարճանայ կ'ուղէք :

ԿՐՍ. Չ'է , այդ ալ ես չ'եմ ընդունիր :

Վ.Հ.Ն. Այդ պաշտօնին արժանաւորութիւնը չ'ունինք :

ԴՐՀ. (Քիջ մը վրան խնդամ) Ի՞նչ ըսելէ . . . Դուք Մուշեղէն շատ աղէկ արժանաւոր էք :

ՇՐՇ. (Աստիճայ խնդովին վահանը ծաղրել կուզեն) :

Վ.Հ.Ն. (Չ'եմ գիտեր որո՞ւ հետ խաղայ կուզեն) :

ԴՐՀ. (Առ կիւրոս) Իշխան , այս բաժակն ալ հօրդ առողջութեանը համար կ'առաջարկեմ :

Վ.Հ.Ն. Ես ընդունեցի :

ՆԵՐ. Ես ալ :

Վ.Ղ.Ն. Ես ալ : (բաժակահարելով կը խմեն) :

ՇՐՇ. (Չ'են գիտեր՝ որ իրենց կենաց բաժակն ալ պատասխանաբար է) :

Վ.Հ.Ն. (Քիջ մ'ալ ես գրօնում) Եթէ ներքի է ինձ , ես ալ Պարսկաստանի համար բաժակ մ'առաջարկեմ :

ԿՐՍ. Սիրով կընդունինք :

ԴՐՀ. Ատոր մէջ ալ կը փափաքինք :

ՆԵՐ. (Կատակ մ'ալ ես ընեմ) Ես ալ կը փափաքիմ . . .

Պարսկաստան մեր փրկութեան կեդրոնն է :

Վ.Ղ.Ն. (Թո՛ղ այդպէս ըլլայ) Ատանկ է :

Վ.Հ.Ն. (Առ Ներսէս եւ Վաղինակ ցած) Մեկնեցէք :

ԴՐՀ. Է՛յ , բաժակը ձեռքիս փակաւ :

Պ.Ս.Կ.Ն. Կեցցէ՛ Պարսկաստան , Կեցցէ՛ Խոսրով Շահ , Կեցցէ՛ մե՛ծ հազարապետ : (Կը խմեն) :

ՇՐՇ. (Քիջ մ' ետքն ես պիտի մաղթեմ իրենց համար) :

Վ.Ղ.Ն. (Ոտքի ելնելով) Մեզի թողութիւն չ'որհնեցէք :

ՆԵՐ. Մեզի ալ :

Վ.Հ.Ն. Աղատ էք :

ԿՐՍ. Ի՞նչու այսչափ կ'աճապարէք :

Վ.Հ.Ն. Կարեւոր գործեր ունին :

ԿՐՍ. Ուրեմն չ'ենք բռնադատեր : (Կուտեն) :

Վ.Հ.Ն. (Ներսէսը մէկ կողմ առնելով) Պատուիրես Վահանին որ Միհրանայ պալատին մէջի անձինքը՝ բոլորն ալ կութ լեռը տանի . (Ներսէս Ղաղինակ կըմեկնին) :

ԿՐՍ, Հայրս շատ կը սիրէ իշխանը . (Առ Վահան) իրաւ կ'ըսեմ , իշխան :

Վ.Հ.Ն. (Ձիւ կը ծաղրէ) Ձեր հօր աղնութիւնն է այդ մէջ նշանաւոր ծառայութիւններ ըրած չ'ենք :

ԴՐՀ. (Ասանկ ապուշներուն վրայ խնդալու է) Ձեր անհրաժեշտ համարած ծառայութիւններն մե՛ծ արժէք ունին :

ԳՐԳՆ. (Գայով) Ի՛շխան , քիչ մը դուրս գալու շնորհ
ըրէ :

Վ.ՀՆ. Ի՛նչ կայ :

ԳՐԳՆ. Մէկը ձեզ տեսնալ կ'ուզէ :

Վ.ՀՆ. Կարեւոր դործ մ'ըլլալու է . (Ոտքի ելնելով)

մէկ երկու վայրկեանն ինձ թողութիւն շնորհեցէք :

ԿՐՍ. Կա՛մբը ձերն է : (Կ'երբայ) :

ԳՐԳՆ. (Գաղտնի) Շնորհ , դուք ալ դուրս ելէք
(Բոյոք Հայերը կը մեկնին) :

ՏԵՍԻՒ Ժ.

ԿԻՒՐՈՍ , ԳԱՐԵՆՉ , ՊԱԼԱՏԱԿԱՆՅՐ

ԳՐՀ. Իմ փորիկս կշտացաւ :

ԿՐՍ. Գործէ՛ , մինչեւ հիմայ քեզի յայտնած չ'եմ :

ԳՐՀ. Ի՛նչը :

ԿՐՍ. Մեր գերուհւոյն սիրահարած եմ . այս գիշեր ա-
մեն միջոց 'ի գործ պիտի դնեմ :

ԳՐՀ. Յաջողութեան բաժակ կ'առաջարկեմ :

ԿՐՍ. Երգով մը : (Միամայն արիւղի վեղ երգելէն վեր-
ջրն , առատադէն կսկսի բոցն ծառայի սենեկին մեջ) :

ԿՐՍ. Ի՛նչ ըրին . (Դուռը կը վագէ) գոց է :

ԳՐՀ. Վ.այ :

ԲՈԼՈՐԸ. Օգնութիւն . . կրակը . անփոճալ Գայլ Վահան
(Կրակին ներգործութեան համեմատ շարժման , ըփոք ,
ձիջ ընելով , մէյ մեկ կողմ կը շրջուին) :

ԶԳԻ ՎԱՐԱԳՈՅՐՆ



ՎԵՐՉԱՐԱՆ.

ՏԵՍԻՒ Ա.

(Կոյք լերան վրայ վրաններ զարնուած . Վահան
Մինրանին դիմրովն ծպտեալ . իր հասատարիմ-
ներն ալ Մինրանայ մարդոց զգեստներն
հագած) :

ՎԱՀԱՆ , ԳԱՐԵԳԻՆ , ԶՐԲ :

Վ.ՀՆ. Գարեգին , անթիւ վրէժներ լուծեցինք , բայց
էրբ Սմբատիս յիշատակը մտքիս մէջ կ'արթնայ
սրախ մէջ նոր վրէժներ կը ձայնեն եւ զիս տակն ու վը-
րայ կընեն . . . եւ եթէ այս ցաւալի վիճակաւ զիս ոգեա-
պառ չեա տեսնոր , մի զարմանար . . . հայրենացս վեր-
կութեան համար է , որ քիչ մը կը մխիթարուիմ :

ԳՐԳՆ. Տէր իմ , եթէ վշտերու մէջ սփոփանքներ չըզտ-
նուէին , մահաւանջուին շատ նեղ սխալ դար այս աշխար-
հըս . . . դուն Սմբատ մը կորուսիր , Հայաստան մը զը-
տար . այս է եղեր ձեր ճակատագիրը :

Վ.ՀՆ. Գո՛հ եմ :

ԳՐԳՆ. Ունիս մի վրէժ , թերեւս զայն ալ առնես :

Վ.ՀՆ. Յուսով եմ :

ԳՐԳՆ. Ուրեմն չախաւորեցէք վիշտերնիդ . զուակդ
բու քաջութիւններուդ մէջ կենդանի է :

Վ.ՀՆ. Կ'ուզեմ չը ցաւիլ . . . սակայն բնութիւնը

այն վեց տարուան կորստին տխուր յիշատակը տակաւին սրտէս բոլորովին չէ չնշած . մի մեղադրէք զիս .

ՏԵՍԻԼ Բ.

ՎԱՀԱՆ, ԳԱՐԵԳԻՆ, ՆԵՐՍԷՍ, ՇԱԽԱՐՇ՝ ԶՕՐԲ:

ՆԵՐ. Տէր իշխան :

Վ.Հ.Ն. Հնա, Ներսէս . . . դճւք էք . . . Ընչ ըրիք :

ՆԵՐ. Գարանը դրուեցաւ Հայ բանակը . . . միւս հըրաւանդ ալ Վահէին հաղորդած եմ :

Վ.Հ.Ն. Վարչիբէն տեղեկութիւն մը :

ՆԵՐ. Գեռ ձեզի չը ներկայացաւ :

Վ.Հ.Ն. Ո՛չ :

ՆԵՐ. Իւր բանակն դաշան թողուց . . . դուցէ ինքը ուրիշ ճամբով կ'ուզայ :

Վ.Հ.Ն. Շաւարշ, շուտ, Վաղինակը ինձ կանչէ : (կերբայ)

Վ.Հ.Ն. Գիշերով անոնց գործը լմնցնեն . պատուիրեցիր :

ՆԵՐ. Ամեն բան կարգադրուած է :

ԳՐԳՆ. (Առ. Ներսէս) Վարչիբն աչքովդ տեսար՞ :

ՆԵՐ. Կը տարակուսիք :

Վ.Հ.Ն. Գարեգին, դուն շուտ ճամբուն անցքը կայրէ .

և յայտնէ իրեն թէ՛ Միհրան առանձին կ'ուզէ տեսնուիլ

. . . աշխատէ որ Հայ ըլլալդ չը ճանչնայ :

ԳՐԳՆ. Անհող եղէք : (Կերբայ) :

ՏԵՍԻԼ Գ.

ՎԱՀԱՆ, ՆԵՐՍԷՍ, ՎԱԳԻՆԱԿ, ԶՕՐԲ

Վ.Ղ.ՆԿ. Ահա եկայ, տէր իշխան :

ՆԵՐ. Գարեգին, ապասէ, դու հոս գործ ունիս . . .

բայց պատուէրներս Մուշեղին յայտնեցիր . քանի օրէ 'ի վեր բան մը կորսնցուցածի պէս էի, քեզ տեսայ որ միտքս եկաւ .

Վ.Ղ.ՆԿ. Պատմեցի, ինքն ալ շատ գոհ եղաւ և որոշած է իր խնդակցութիւնը յայտնելու համար անձամբ հոս գալու :

Վ.Հ.Ն. Թէ և ինձ պարտք էր առաջին այցելութիւնս ընել, բայց դեռ ուխտս կատարեալ չ'եղաւ . դեռ աշխարհէս բնաջինջ չըրի Հայրենեացս թշնամիքը, շորոնց մէջն ևն անշուշտ առաքինի Մուշեղի աղջկան և իմ Սմբատիս դահիճները . . . վեց մարի առաջ պատերազմը դաշտի վրայ անհետացան . . . ով իմ Սմբատս : (կ'ուրայ)

Վ.Ղ.ՆԿ. (մտնելով) Տէր իմ, Պարսից իշխաններէն մին հոս կ'ուզայ :

Վ.Հ.Ն. Ո՞վ է :

ՆԵՐ. Կարծեմ Վարչիբն է . . . :

Վ.Հ.Ն. Վարչիբ . ով արիւն որդուդ, հրճուէ, անն քու վրիժոյդ մէկ գոհն ալ . . . զգուշութիւն ըրէք . Շաւարշ, պատրաստէ իրեն համար աթոռ մը :

ՇՐՇ. Ահաասիկ տէր, (արքա մը կատնէ եւ վահաւնին դիմ կը դնէ) այս աթոռ անոր յաւիտենականութիւն երթալու սրբնիւթաց կառք մը պիտի ըլլայ :

Վ.Հ.Ն. Լռէ, ապուշ ձ՛ծի : (շատ կը սիրեմ սա թշուառական Շաւարշը) :

Վ.Ղ.ՆԿ. Եկաւ :

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆԲ, ՎԱՐՇԻՐ, ԶՕՐԲ

(Վարչիբ գալով՝ խոնարհութիւն կընէ եւ կը կանգնի)

ՇՐՇ. (Առ. Գարեգին) Հնայ աւանակ . Միհրանը կարծեց .

ԳՐԳՆ. (Առ. Շառար) : Լռէ :

Վ.ՀՆ. Նստէ, Վարչիր :

Վ.ԱՐ. Շնորհ ունիմ, տէր իշխան : (Կը նստի) :

ՇՐՇ. Այս աթոռը յատկապէս ձեզ համար պատրաստուած է :

Վ.Ն. (Հիւանդութեան ցոյցեր բնելով) Անճնական արկարութեան պատճառաւ օգաիտիսութեան համար եկած եմ այս կողմերս :

Վ.ԱՐ. Շատ աղէկ էք ըրեր, մեծ հաղարպետ, հոս տեղի օդը շատ առողջ է :

ՇՐՇ. (Ելուն մեկն է եղեր սա ապուշը . դեռ չը ճանըցաւ) :

Վ.Ն. Հիմայ մեր գործը նայինք, բանակդ բերած ես :

Վ.ԱՐ. Գրածներդ կէտ առ կէտ 'ի գործ զրած եմ :

Վ.Ն. Աղէկ, բայց ես տկար եմ :

Վ.ԱՐ. Անհող եղիք, ձեր հրամանը բաւական է :

ՇՐՇ. (Երազ կը տեսնէ խեղճը) :

Վ.Ն. Ապրիք . . Հայոց կողմանէ լուր մ'ունիք :

Վ.ԱՐ. Միայն լսեցի թէ Վահան ձեր եղբայրն սպանուած է :

Վ.Ն. Վահան . . : (Ինքզինքը կը լայտնէ) :

ՇՐՇ. (Յաւիտեանական կտաքին ձիերն լծելու ժամն է)

Վ.Ն. Տես եւ գողնա :

Վ.ԱՐ. (Ինքն ըլլալու է) :

Վ.Ն. (Քովիկնեքուն) : Շուտ, կապեցէք զինքը : (Կը կապեն) :

ՇՐՇ. Ձեռքերը որ կապենք ինչով վրէժ լուծէ մարդը :

Վ.Ն. Օն, չիթայակապ ըրէք զինքը : (Շղթայ կը գարնեն)

ՇՐՇ. Ե՛հ . . վրէժ լուծող մարդը ասանկ կը պտուկի . .
Լեզուն կ'ընց աս մարդը ինչ ըրաւ :

Վ.ԱՐ. Գերի մը զիս ընդունէ՛, խնայէ՛ կենայս :

ՇՐՇ. Հէ՛, փառք Աստուծոյ, Լեզուն բացուեցաւ :

Վ.Ն. Ես արդէն մարդ մը իբրեւ ազատ ստեղծուած
զերի չեմ ընդունիր, միայն հրաման մ'ունիմ :

Վ.ԱՐ. Պատրաստ եմ :

Վ.Ն. Հիմայ նամակ մը պիտի գրել տամ քու ըերնէդ,
կնքել յանձնառու կըլլան :

Վ.ԱՐ. Այո՛, զիս ազատ միայն թող :

Վ.ՀՆ. Վաղինակ, նստէ . գրիչ կաղամար առ ձեռքդ՝
(Կ'առնի) Գրէ՛ . «Մեծապատիւ հրամանատարս . (Վաղի-
նակ կսկսի գրել) Միհրանէն ընդունած հրամանիս համա-
այն կ'ազգարարեմ քեզ, որ բանակդ առնելով կութ
լերան ստորուրդ գաս . . » :

Վ.Ղ.Ն.Կ. Գրուեցաւ :

Վ.ՀՆ. Դի՛ր օտորագրութիւնը :

Վ.Ղ.Ն.Կ. (Կը գրէ) Եղաւ :

Վ.ՀՆ. Տուր անձնական կնիքդ : (Ձեռքը կը բակեն) :

Վ.ԱՐ. Առէք : (Կուտայ) :

Վ.Ն. Վաղինակ, կնիքն ալ զմրկ : (Կը գարնէ) :

ՆՆԲ. Որո՞ւ ձեռքով պիտի գրկէք :

Վ.Ն. Հիմայ կըսեմ :

Վ.Ղ.Ն.Կ. Ահաւասիկ : (Վանանիկն կուտայ) :

Վ.Ն. Աս լեռնէն վար գլորեցէք զինքը : (Կը տանիկն) :

ՇՐՇ. Մեծ իշխան մ'ըլլալուդ տես ինչ հանգէսով կը
տանինք :

ՎԱՐ. Իշխան , այսպէս միթէ կը մեծարէք ձեր խոստումը :

ՇՐՇ. Է՛յ , երկան ըրիր , կառքերուն ձիերը լծուած ձեզ կ'ըստպանեն :

ՎՆ. Անիրաւ թշնամիի մը համար . . տարէք :

ՎԱՐ. Անիծեալ ըլլաս , Գայլ Վահան :

ՇՐՇ. Քալէ : (Կերքան) :

ՏԵՍԻԼ Ե.

ՎԱՀԱՆ , ՆԵՐՍԷՍ , ԳԱՐԵԳԻՆ , ԶՕՐՔ

ՎՆ. Երթնամ այս նամակն ալ անձամբ գործարդել տամ . . Գարնդին , հոսկից մի՞ զատուիք , Վահէն կալանաւորներ պիտի բերէ լաւ հսկէք , Մուշեղ իշխանն ալ որ գայ , յարգանքը ընդունեցէ՛ք , ես կ'ուզամ հիմայ (Կերքայ) :

ՏԵՍԻԼ Զ.

ԳԱՐԵԳԻՆ , ՄՈՒՇԵՂ , ԶՕՐՔ

ՄՇՂ. Ո՞ւր է Վահանը :

ԳՐԳՆ. Հիմայ մեկնեցաւ . . ամեն բան յաջող է :

ՄՇՂ. Ես ալ միշտ յաջող աւետիաներ առնելու եկած եմ այս յաղթանակներուն վրայ մէկտեղ ուրախանալու . . Բնչ ձայներ են :

ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆՔ , ՎԱՀԷ ԵՍ ԿԱԼԱՆԱՒՈՐՔ

ՎՀԷ. Մտէ՛ք :

ՊԱՐ. Օրիորդ , դուն մի՞ նեղանար շղթայներն իմ թեւերէս կախուած տեսնելուդ :

ՕՐ. Քանի որ այդ շղթայները կը տեսնեմ , կարծես դարձեալ նոյն մութ բանտին մէջ կը գիտնամ դձեղ :

ՊԱՐ. Զէ՛ կերեւայ թէ մեզի անպատուութիւն պիտի տան (Բնդհակառակն պիտի գլխատեն) :

ՕՐ. Ո՞վ գիտէ գըքեզ անգամ մ'ալ պիտի տեսնեմ : (Այս ազատութեան տակ ո՞վ գիտէ քեզաւ մը նխքուած չէ)

ՄՇՂ. Ո՞վ երկինք , Բնչ ձայն էր որ սիրտս կեղեքեց , չեմ համարձակիր գլուխս դարձնել , չըլլայ թէ աղջկանս ուրուանանը զիմացս կանգնած տեսնեմ՝ որ երազներուս միակ առարկան եղած է :

ՍՐՆԿ. Ա՛հ , հոս թէեւ ազատ օդ կը շնչեմ , բայց միշտ գերի մ'եմ , գերի :

ՄՇՂ. Տէր Աստուած , կարծես իւր ձայնն է :

ՍՄԲՏ. Մի՛ ցաւիր , սիրելիս :

ՇՐՇ. Սիրելի . . այս Բնչ սիրտ կտրուկ բան է , ասոնք իրարու սիրահարած ըլլալու են :

ՍՄԲՏ. Մի՛ մտածեր , այս մեր դժբաղդ ճակատողիքն է , ծռենք գլուխնիս բաղդին հարուածին դէմ . եթէ երկրի վրայ չը կրցանք միանալ , երկինքը կը միանանք , սիլ իմն Սաթենիկ :

ՄՇՂ. Սաթենիկ . . աղջկանս ուրուա . . : (Կը դառնայ՝ որ նայի) :

ՍԹՆԿ. Ի՞նչ կը տեսնամ, երկինք, հայրս է . . . :

ՍՄԲՏ. Աստուած իմ, իւր հայրը :

ՄՇՂ. Ինքն է, Սաթենիկ :

ՍԹՆԿ. Հայր իմ : } (Կը գրկուիմ) :
ՄՇՂ. Սաթենիկ :

ՄՇՂ. Կենդանի ես, կենդանի, աղջիկս, ով նախախնամութիւն Աստուածային :

ՍԹՆԿ. Կենդանի եմ, հայր իմ, եւ ա՛ն՞, գրկիդ մէջ :

ՄՇՂ. Ո՛վ անակնկալ երջանկութիւն, գրկէ՛ դիս, որդեանկ, երկար ժամանակ գրկէ՛ որպէս զի վտահ ըլլամ՝ թէ շատ անգամ տեսած երազներուս պէս այս ալ ցնորք մը չ'ըլլայ . չէ, չեմ խարտիր, խարտսիկ երազ մը չէ սոյս, Սաթենիկս է գրկիս մէջ եւ ես երջանիկ հայր մ'եմ :

ՍՄԲՏ. (Իսկ ես, զժբաղդս, յախտեան կորսնցուցի իմ երջանկութիւնս, ա՛ն, ո՛ւր է իմ բանտս, նոն աւելի երջանիկ էի) :

ՏԵՍԻՂ Ը.

ՆՈՅՆՔ ԵՍ ՎԱՀԱՆ

ՎՆ. (Դրսեմ) : Թո՛ղ կալանաւորաց ամենուն ալ աղատութիւն չնորհուի : (Կը մտնե) :

ԲՈՂՈՐՆ. Վահան :

ՎՆ. Վերջապէս ուխտս կատարուեցաւ . . . Բնչ կը տեսնեմ . . . ով է այդ մատաղ աղջիկը :

ՄՇՂ. Վահան, որդեակս դտայ, դաւակս, Սաթենիկս : ՎՆ. Իսկ ես իմ դաւակս չը գտայ : (Գլուխը մեջ կառնե) : Ո՛վ Աստուած իմ . . . :

ՍՄԲՏ. Բայց երկինք օգնէ՛ ինձ, հայրս է, չեմ տարակուսիր ինքն է . . . Բնչո՛ւ կը թուլանամ, նետուխ իւր գիրկը . բայց հայր իմ, վեր վերցուր գլուխդ :

ՎՆ. Ո՞վ է զիս կանչողը, Բնչ ձայներ են : (Կը նայի) Ա՛ն, Սմբատ որդեակ իմ :

ՍՄԲՏ. Հայր իմ : (Կը գրկուիմ, յուսրիւն) :

ՎՆ. Երկար տարիներ, սիրտս քեզ սղբալէն վերջը, Աստուած զքեզ իմ գրկիս կը վերադարձնէ :

ՇԲՇ. Աս Բնչ աղւորիկ բաներ կըլլան կոր :

ՄՇՂ. Տես, Վահան, Աստուծոյ բարութեան աջը, Բնչ պէս երկուքնիս ալ միեւնոյն օրը կ'երջանկայնէ :

ՎՆ. Աղչեցեալդ իմ Սմբատ, դու ալ գերի էիր, ով ըզքեզ գտասպարտեց :

ՍՄԲՏ. Հայր իմ, թէ եւ գերի թէ եւ ստորին պարտիդ պան մը Միհրանայ պալատին մէջ, բայց սէրը իմ անարգ գերութիւնս ազնուացուց :

ՎՆ. Ա՛ն, ուրեմն Միհրանայ պարտիղին մէջ քնացողը դու էիր :

ՍՄԲՏ. Այո՛, ուր նաեւ Սաթենիկը գերի էր, եւ իրար կ'սիրփէինք :

ՎՆ. Ի՞նչ, որդեանկ, սիրեցիք զիրար :

ՍԹՆԿ. Այո՛, ես ալ զայն սիրեցի :

ՄՇՂ. Ուրեմն թո՛ղ այսուհետեւ երջանիկ ըլլան, որդ-

եանկ իմ Վահան, եւ կրկին հանդիսիւ ամրապնդենք մեր մրուօթեան կապերը, իսկ քու քաջութեանդ մրցանակը, երկինք անշուշտ պիտի պարզուեն :

Վ.Ն. Ի՛շխան, մեր մեր Հայրենեաց թշնամիները ջնջելով Ազգին երջանկութիւնն ապահովցուցինք, եւ մեր գաւաակները գտանք . այս հրաշալիքները՝ նախահնամութեանէն մեզ տրուած՝ կատարեալ մրցանակ մ'են . եթէ այսուհետեւ մեր զաւակներն ալ մեր օրինակին հետեւելով պաշտպան կենան միշտ իրենց Հայրենեաց ազատութեան, անմահութեան մէջ մեր երջանկութիւնը կատարեալ կըլլայ :

ԶԳԻ ՎԱՐՍՅՈՅՐՆ



Ե Բ Զ

ՄԻՍԼ		ՈՒՂԻՂ	
ԷՉ	ՏՈՂ		
14	21	Քուչանաց	Քուչանաց
17	3	(ոսրի)	(ոսրի)
17	9	անթարմանելի	անթարդմանելի

2013

13135

